


974

Կիւսպէս կայծակէր
սէլ սաւոր թիրթի
արիւնքաւիճ



06 JUN 2009

крестьянская **ԽՈՐՀՐԱՅԻՆ**
ԳԱՅԵՄԱ **ՀԱՅԱՍՏԱՆ**

Բ. ԳՈՐԵԼԻԿ

Պատի թերթի մշտադասերը

Սուղից գառախոսություն

ՆՏԵՍԱՑԻՆ ՅԵՎ ԲՐԻԳԱԴԱՑԻՆ ՊԱՏԻ ԹԵՐԹԵՐԻ
ԽԲՄԱԳԻՐՆԵՐԻ ՀԵՌԱԿԱ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

Գառախոսությունները լույս են տեսնում „Խորհրդային
Դասակարգի պատ. խմբագիր Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ
ընդհանուր խմբագրությամբ

ԴԷԸ

ԳԴԿ

07

Գ-Ց1

ՀԿ(Բ)ԿԿԿ հրատարակչություն — „Խորհրդային Հայաստան“
Յ Ե Ե Վ Ա Ն

1986

ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՊԱՏԻ ԹԵՐԹԻ ԱՅԽԱՏԱՆՔԸ

Գասախոսությունները լույս են ընծայվում «Խորհրդ. Հայաս-
տան»-ի խմբագրության կից կազմակերպված մեթոդական հանձ-
նաժողովի կողմից, հիմք ընդունելով «Կրեսյանական Գազե-
տան»-ի ուսումնական կամբինասի հրատարակած գասախոսու-
թյունները:



Կոլեկտիվի անդամները պատի բերքերի խմբագիրների Հա-
յաստանի հեռակա ուսուցման գասընթացների ղեկավար, «Խոր-
հ.»-ի բանգյուղըրակիցների բաժնի վարիչ՝ Մ. ՄԱՐՏԻԿԵՍՆ

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՈՒՅՍ ԵՆ ՑԵՍ-
ՆՈՒՄ ՀԵՏԵՎՅԱԼ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ.
ՈՒԿՐԱՅԵՐԵՆ,
ԹԱԹԱՐԵՐԵՆ,
ԿԱԶՄԱԿԵՐԵՆ,
ՎՐԱՅԵՐԵՆ,
ՀԱՅԵՐԵՆ,
ԲՈՒՐԳԵՐԵՆ,
ՐԱՅԿԻՐԵՐԵՆ:

600
1000
39133

3976

ԲՐԻԳԱԴԱՅԻՆ ՅԵՎ ԿՈՒՏՆՏԵՍԱՅԻՆ ՊԱՏԻ
ԹԵՐԹԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Յուրաքանչյուր աշխատանք ունի իր ա-
ռանձնահատկությունները: Իր առանձնա-
հատկություններն ունի, որինակ, կուակազ-
մակերպչի աշխատանքը, վոք կուակացական-
մասսայական աշխատանք է կատարում: Ա-
ռանձնահատկություններ կան և բրիգադիրի
աշխատանքում, վորը ղեկավարում է բրիգա-
դի տնտեսությունը, կազմակերպում է նրա
աշխատանքը, դասավորում է մարզկանց և
այլն: Գյուղխորհուրդն իր առանձնահատուկ
խնդիրներն ունի, կոլտնտեսական վարչու-
թյունն՝ իրը:

Առանձնահատկություններ ունեն նաև
բրիգադային ու կոլտնտեսային պատի թեր-
թերը: Յուրաքանչյուր պատի թերթի խմբա-
գիր պետք է խմանա այդ առանձնահատուկ-
թյունները: Նա պետք է գիտենա և հիշի,



պարզ պատկերացնի, թե կոչանտեսությունում (բրիգատում) ինչի համար պատի թերթ գոյություն ունի, ինչ խնդիրներ են դրված այդ թերթի առաջ, հետևապես՝ ինչ բովանդակություն պիտի ունենա այդ թերթը, ո՞վ պետք է պատրաստի այն, պատի թերթն ինչ պիտի գործերով պիտի զբաղվի և ինչ հարցերով չպիտի զբաղվի:

Բուլչևիկյան թերթը, ինչպես Լենինն երատում, «վոչ միայն կուլեկտիվ պրոպագանդիսա ու կուլեկտիվ ագիտատոր է, այլ և՛ կուլեկտիվ կազմակերպիչ»: «Մամուլը մեր կուսակցության ամենաուժեղ ու ամենասուր զենքն է»: Այսպես է ասել ընկեր Ստալինը: Մեր թերթերն աշխատավորությանը դատարարակում են կոմունիստական վոգով: Բուլչևիկյան թերթը քննադատում է այն թերթությունները, վորոնք կան տեղական աշխատողների ու կազմակերպությունների աշխատանքներում: Նա մերկացնում է դասակարգային թշնամիներին, ոպորտունիստներին, բյուրոկրատներին»:

Մեր յերկրում շատ բազմապիսի թերթեր կան: Որինակի համար, վերցնենք կենտրոնական թերթը: Նրանց մեջ են «Պրավդա»-ն, «Իզվեստիա»-ն, «Կրեստյանսկայա Գազետա»-ն, «Գուդոկ»-ը, «Չա ինդուստրալիզացիո»-ն, «Սովետսկայա Տորգովյա»-ն և շատ ուրիշները: Այդ բոլոր թերթերը մի ընդհանուր գործով են զբաղված. նրանք պայքարում են

կուսակցության վորոշումների կիրառման համար, կուսակցությանն ոգնում են՝ ամբաստնադելու սոցիալիստական տնտեսությունը, ամբաստնադելու խորհրդային պետությունը:

Սակայն, միևնույն ժամանակ, այդ թերթերից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները, իր ընթերցողները: Նրանցից յուրաքանչյուրն սպասարկում է մեր ժողովրդական տնտեսության առանձին ճակատամար: «Գուդոկ»-ը հրատարակվում է յերկաթուղայինների համար, «Լյուկայա ինդուստրիա»-ն թեթև արդյունաբերության բանվորների ու մասնագետների համար և այլն: Այդ թերթերից յուրաքանչյուրը աշխատավոր մասսաներին կազմակերպում է սոցիալիստական շինարարության շուրջը և պայքարում է կոմունիստական կուսակցության ու նրա կենտրոնական կոմիտեյի վորոշումների կենսադործման համար:

Մեր բոլոր քերթերի ֆադաֆական գիծը մեկ է. այդ կոմունիստական կուսակցության գլխավոր գիծն է: Սակայն քերթերից յուրաքանչյուրն այդ գիծը կենսագործում է համապատասխան այն խնդիրների, վոր դրված է սոցիալիստական շինարարության այս կամ այն նախատամասի առաջ: «Պրավդա»-ն լուսարանում է այդ շինարարության բոլոր հիմնական, գլխավոր խնդիրները: «Պրավդա»-ն ավելի, քան վորևէ մի ուրիշ թերթ, ուշադրություն է դարձնում այնպիսի հարցերի վրա, վորոնք ընդհանուր են մեր ամբողջ

յերկրի համար— տնտեսութեան քաղաքական
դեկալարութեան, պետական ապարատի,
կուլտուրական ու ազգային շինարարութեան
խնդիրները վրա: Իսկ այնպիսի թերթերը,
վորոնք են, որինակ՝ «Գուղոկ»-ը, «Ձա ին-
դուստրալիզացիոն»-ն ավելի շատ զբաղ-
վում են տնտեսութեան իրենց ճյուղին վերա-
բերող հարցերով. «Գուղոկ»-ը՝ քրանսպորտի
աշխատանքի հարցերով, «Ձա ինդուստրալի-
զացիոն»-ն՝ ծանր արդյունաբերութեան:

Նույնպիսի բաժանում կա նաև մյուս տե-
ղական թերթերի միջև:

Մեր յերկրում կան կենտրոնական, հան-
րապետական, յերկրային, մարզային, շրջա-
նային, խորհատնտեսային, տրանսպորտի, գոր-
ծարանային թերթեր: Այդ թերթերից յուրա-
քանչյուրն ունի իր առանձնահատկութիւն-
ները: Որինակ՝ համաուկրայնական հանրա-
պետական «Կոմունիստ» թերթը Ուկրայնիայի
կյանքը շատ ավելի լրիվ ու մանրամասն է
լուսարանում, քան մյուս թերթերը, ինչպես
և ընդհանուր միութենական թերթերը: Յերկ-
րային թերթն իր գլխավոր ուշադրութիւնը
դարձնում է իր յերկրի կյանքի վրա: Շրջա-
նային թերթում տվյալ շրջանի կյանքին վե-
րաբերող նյութ ավելի շատ կա, քան յերկ-
րային թերթում՝ նույն շրջանի մասին: Շրջ-
անային թերթի բովանդակութիւնն այլ է
արդյունաբերական շրջանում և այլ՝ գյուղա-
տնտեսական շրջանում: Գործարանային թեր-
թըն իր գլխավոր ուշադրութիւնը դարձնում

է իր գործարանի կյանքի վրա: Կուլտուե-
տութեան և բրիգադի պատի թերթն էլ ունի
իր առանձնահատկութիւնները: Մեր բոլոր
թերթերը, սկսած «Պրավդա»-ից, խորը կեր-
պով են հետաքրքրվում կուլտուեսային կյան-
քով: Նրանք լուսարանում են նույնիսկ առան-
ձին կուլտուեսային բրիգադի աշխատանքը,
ցույց են տալիս լավագույն բրիգադիներին,
կուլտուեսականներին, կուլտուեսային գյուղի
անվանի մարդկանց: Այդ որինակներով
«Պրավդա»-ն, «Կրեստյանսկայա Գազետա»-ն
ամբողջ յերկրին աշխատել են սովորեցնում:

Սակայն կենտրոնական թերթերից վոչ
մեկը չի կարող և իրեն նպատակ էլ չի դնում
որըստորե հետեւել, թե տվյալ բրիգադի,
տվյալ կուլտուեսութեան յուրաքանչյուր կուլ-
տնտեսականն ինչպես է աշխատում: Այդ կա-
րող է անել միայն այն կուլտուեսային կամ
բրիգադային պատի թերթը, վոր հրատարակ-
վում է այդ կուլտուեսութիւնում և այդ բրի-
գադում:

Կուլտուեսային ու բրիգադային թերթը
պետք է իմանա, թե կուլտուեսական Պետրովը
ինչ բանի կարիք ունի, ինչ է մտածում, ին-
չից է դժգոհ և ինչ է ցանկանում, ինչպես են
դաստիարակվում նրա յերեխաները, ինչպես
է անցկացնում նա իր ժամանակը, ինչպես է
ապրում նրա ընտանիքը և այլն: Այս ամենը
պետք է հետաքրքրի բրիգադային պատի
թերթին: Բրիգադային կամ կուլտուեսային
պատի թերթը, ոգտագործելով իր բրիգադի

և առանձին կոլտնտեսականների կյանքի ու աշխատանքի որինակները, ամեն որ պետք է պարզարանի կուսակցութեան վորոշումները և մասսաներին մորիլիգացիայի յենթարկի այդ վորոշումների կենսագործման համար:

Պատի թերթի աշխատանքներում մեծ նշանակութիւն ունի ուշադիր վերաբերմունքն այն բանին, թե ինչ լեզվով են խոսում տվյալ կոլտնտեսականները (ուկրայնէրեն, վրացերեն, թաթարերեն և այլն): Յեթե ամբողջ կոլտնտեսութիւնն այդ լեզուներից վորեն մեկովն է խոսում, ապա պատի թերթն էլ այդ լեզվով պիտի հրատարակել: Յեթե կոլտնտեսականները տարբեր ազգի յեն, ապա պետք է աշխատել, վոր պատի թերթն էլ մի քանի լեզուներով լինի («անկյուններ»), մի քանի հրատարակութիւն, բարձրաձայն ընթերցանութիւն ժամանակ թարգմանութիւն կատարել և այլն):

ՊԱՏԻ ԹԵՐԹԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՈՒ ԲՐԻԳԱԴՈՒՄ

Կոլտնտեսութիւնում կամ ^{ուրի} բրիգադում ինչի՞ համար է հրատարակվում պատի թերթը և ինչ բովանդակութիւն պիտի ունենա այն:

1

Կոլտնտեսութիւն և բրիգադայի պատի թերթն ոգնում է կոլտնտեսութիւն քաղաքական, կազմակերպչական ու տնտեսական ամ-

6

բաւնդմանը, կյանքում կիրառում է հարվածային կոլտնտեսականների Յերկրորդ Համախոթենական համագումարի ընդունած Որինակելի կանոնադրութիւն հիման վրա կազմած ցրուղատնտեսական արտելի կանոնադրութիւնը: Կոլտնտեսութիւն և բրիգադայի պատի թերթը կոլտնտեսութիւն վարչութիւնն ու իր բրիգադիինն ոգնում է աշխատանքն այնպես կազմակերպել, վոր ժամանակին ու լիովին կատարվեն կոլտնտեսութիւն բոլոր պարտավորութիւնները՝ խորհրդային պետութիւն հանդեպ: Թերթը բրիգադիինն ոգնում է ճիշտ կազմակերպել աշխատաքը, ամբաւնդել աշխատանքի դիտցիպլինան կողտնտեսութիւնում, հասնել բարձր բերքատվութիւն, տիրապետել ագրոնոմիայի նորագույն նվաճումներն քւ մեքենայական տեխնիկան, կոլտնտեսութիւնում կարգավորել կուլտուրական կյանքը: Թերթը կոլտնտեսականներին ոգնում է կիրառել հոգի մշակութիւն լավագույն միջոցները՝ ճիշտ ցանքաչրջանառութիւն, աշնանավար, սև ցել, պարարտացում և այլն:

2

Կոլտնտեսութիւն ու բրիգադայի պատի թերթը մերկացնում է կուլակներին, յենթակուլակներին, կոլտնտեսութիւն գործի վնասարարներին: Նա պետք է շարունակ բարձրացնի կոլտնտեսականների հեղափոխական

7

զգոնությունն ընդդեմ դատակարգային թըշնամիների ու նրանց գործակալների:

3

Պատի թերթը մերկացնում է առանձին կոլտնտեսականների վնասակար, հակակոլտընտեսային տրամադրությունները—պրոլետարական պետութայն հանդեպ ունեցած պարտականությունների կատարումը յերկրորդ հերթը դեցելու փորձերը, հասարակական գույքի նկատմամբ անփույթ վերաբերմունք ունենալը, լողբությունը, պոկողականությունը, ղեպի կինը ոչ ընկերական վերաբերմունք ունենալը, յերեսանների հետ կոպիտ վարվելը և սրանց նման այլ յերևույթներ:

4

Կոլտնտեսութայն ու բրիզադի պատի թերթը ցույց է տալիս որինակելի կոլտնտեսականներին, վորոնք իրենց արտադրական սուաջադրանքները լավ են կատարում, ցույց է տալիս աշխատանքի բարձր արտադրողականութայն հերոսներին, տեխնիկան տիրապետած մարդկանց: Լուսաբանում է գերազանց հարվածայինները — ստախանովականների փորձը, խրախուսում է նրանց և մյուս բոլոր կոլտնտեսականներին կոչ է անում՝ աշխատել այնպես, ինչպես լավագույններն են աշխատում: Թերթն ոժանդակում է սոցիալիստական մրցութայն ծավալմանն առանձին կոլտնտեսականների, հարևան բրիզադների ու կոլտնտեսութայնների միջև:

և իր ընթերցողներին լուսաբանում է մրցութայն ընթացքը:

«Հարկավոր է պահպանել յուրաքանչյուր ընդունակ և հասկացող աշխատողին, պահպանել և անեցնել նրան: Մարդկանց պետք է հոգատարութայն, ուշադրութայն անեցնել, ինչպես այգեպանը անեցնում է իր սիրած պտղատու ծառը: Դաստիարակել, ոգնել անելու, հեռանկար տալ, ժամանակին առաջ քաշել, ժամանակին փոխադրել այլ աշխատանքի, յեթե մարդը չի կարողանում գլուխ հանել իր գործից, անանց սպասելու մինչ այն ժամանակ, յերբ նա վերջնականապես կտապալվի»:

Ահա թե ինչ է սովորեցնում մեզ ընկ. Ստալինը: Մեր առաջնորդի այս խոսքերը, վոր նա ասաց անցյալ տարի դեկտեմբերին մետալուրգների պատգամավորութայն հետ ունեցած զրույցի ժամանակ, լիովին վերաբերում է նաև մամուլին:

1935 թվի մայիսի 4-ին Կարմիր Բանակի ահադեմիականների ավարտական հանգեսին ընկ. Ստալինը նոր լողունգ տվեց թե՛ «Կադրերն են վորոշում ամեն ինչ»: Լավ կադրերը, այն մարդիկ, վորոնք լիովին գիտեն իրենց գործը ամեն ինչ վորոշում են նաև կոլտնտեսութայնում: Ահա թե ինչու պատի թերթը պետք է ոգնի գյուղատնտեսական արտադրութայն մեջ կադրեր աճեցնելու գործին, հիշելով ընկ. Ստալինի այն խոսքերը, թե՛

«աշխարհում յեղած բոլոր արժեքավոր կապիտալներից ամենաքանգարժեքի և ամենավնասական կապիտալը եանդիսանում են մարդիկ, կադրերը»:

5

Ընդհուպ զբաղվելով իր կոլտնտեսութան ու բրիգադի բոլոր արտադրական հարցերով՝ պատի թերթը միաժամանակ պետք է մեծ ուշադրություն դարձնի այնպիսի հարցերի վրա, ինչպիսիք են կուսկազմակերպության աշխատանքը, կուսկազմակերպչի աշխատանքը, կուսուսուցումը, ազրոտելունիական ուսուցումը, դյուդխորհրդի աշխատանքը, խրճիթ-ընթերցարանի, ակումբի, դյուդկոտպի, խանութի, ճաշարանի աշխատանքը, կոլտնտեսային տների, բաղնիքների, վարսավիրանոցի, լվացքատան, մանկամսուրի, ծծնդատան գրությունը կոլտնտեսականների վերաբերմունքը դեպի յերեխաները, դեպի կիներ: Պատի թերթը պետք է ուշադրություն դարձնի նույնիսկ ամենամանր կենցաղային հարցերի վրա, յուրաքանչյուր առանձին կոլտնտեսականի բոլոր կարիքների վրա և ուշադիր կերպով լսի նրա բողոքները:

Կոլտնտեսութան կամ բրիգադի պատի թերթը, պայքարելով կոմունիստական կուսակցության գլխավոր գծի կիրառման համար, բոլոր աշխատավորների մեծ առաջնորդ ընկ. Ստալինի ցուցումների կենսադորման համար, իր ամբողջ աշխատանքը պետք է

կառուցի տեղական կյանքի փաստերի վրա, ավյալ կոլտնտեսութան հերթական խնդիրների պարզաբանման վրա: Կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեն դեռ 1924 թվին, յերբ դեռ նոր էլին զարգանում պատի թերթերը, իր ցուցումը ավեց հենց այդպիսի աշխատանքի անհրաժեշտութան մասին: Հատկապես պատի թերթերի մասին ընդունած մի վորոշման մեջ (1924 թվի դեկտեմբերի 1-ին) այսպես է ասված.

«Պատի թերթում պետք է տեղավորել այնպիսի հոդվածներ, վորոնց նյութը կապված է ձեռնարկության դրության հետ, նրա գործունեյության հետ...»

Ապա՝

«Ընդհանուր կամպանիաները պատի թերթերում պետք է յուսարանվեն ավյալ ձեռնարկության շահերի ու խնդիրների սահմաններում: Հեղափոխական հորեյությանների յուսարանումն ըստ հնարավորին պետք է կապված յինի ձեռնարկության կյանքի հետ, ըստ վորում, պետք է ամեն կերպ յուսափել ընդհանուր քաղաքական տեսություններից ու հոդվածներից: Պատի թերթի տռնական համարում, բացի տռնական նյութերից, պետք է տեղ տրվի նաև ընթացիկ խնդիրներին վերաբերող նյութերին»:

Պայքարել կուսակցության գլխավոր գծի համար, ընկ. Ստալինի ցուցումների կատար-

Ման համար,—այդ նշանակում է պայքարել իր կոլտնտեսութիւնը բոլշևիկյան դարձնելու համար: Իսկ կոլտնտեսութիւնը բոլշևիկյան կարող է լինել միայն այն դեպքում, յեթե ժամանակին ու լավ կատարում է գյուղատնտեսական աշխատանքի պլանը, յեթե ազնվորեն կատարում է իր պարտավորութիւնները պրոլետարական պետութեան հանդեպ, յեթե կոլտնտեսութեան բոլոր անդամներն աշխատում են ազնվորեն և պահպանում են կոլտնտեսային բարիքը: Պայքարել կուսակցութեան գլխավոր գծի համար և ընկ. Ստալինի ցուցումները կենսագործելու համար,—այդ նշանակում է անինա մերկացնել կուլակներին ու նրանց զործակալներին, բարձրացնել դաշտերի բերքատվութիւնը, զարգացնել անասնապահութիւնն իր կոլտնտեսութիւնում: Պայքարել իր կոլտնտեսութեան ամրապնդման համար, կոլտնտեսականների ունևոր, կոլտնտեսական կյանքի համար, այդ նշանակում է պայքարել կուսակցութեան գլխավոր գծի և ընկ. Ստալինի ցուցումների միջոց կենսագործման համար:

Կոլտնտեսային ու բրիգադային պատի թերթերը տեղական փաստերի, բրիգադի ու առանձին կոլտնտեսականների աշխատանքի կենդանի որինակի հիման վրա պետք է դաստիարակեն բրիգադի յուրաքանչյուր անդամին, յուրաքանչյուր կոլտնտեսականին այնպես, վոր նա դառանա կուսակցութեան գծի ու հորհրդային կառավարութեան որենքների

ակտիվ գործադրողը, անդասակարգ սոցիալիստական հասարակութեան ակտիվ կառուցողը:

ԿՈՆԿՐԵՏ ԿԵՐՊՈՎ ՑՈՒՅՑ ՏԱՆ ԿԵՆԴԱՆԻ ՄԱՐԿԱՆՑ, ԻՐ ԲՐԻԳԱԴԸ

Մեր առաջ է Վորոնեժի մարզի Ինժավենի շրջանի «Լենինի պատգամը» անունով կոլտնտեսութեան պատի թերթի մի համարը: Այդ համարը նվիրված է խորհրդների ընտրութեանը: Կարդում ենք այդ պատի թերթը: Առաջին հերթին տեղավորված է մի մեծ հոդված՝ «Խորհուրդների վերընտրութիւնները» վերնագրով:

Ահա նրա բովանդակութիւնը

«Սորհուրդների վերընտրութեան յետոն շրջանն է: Յերկրորդ հնգամյակում առանձնապես կարևոր է ակտիվորեն կատարել վերընտրութիւնները, գյուղխորհուրդներին տալ լավագույն ակտիվիստներ, վորոնք կարողանան հակահարված տալ կուլակին, կարողանան մորիլիգացիայի յենթարկել ամբողջ հասարակայնութիւնը, վորպեսզի լավ հիմքերի վրա դրվի հասարակական աշխատանքը: Առանձնապես կարևոր է խորհուրդների վերընտրութիւններին մասնակից լանել կանանց»...

Ապա նույն ձևով շարունակում է.

«Վոչ մի բնագավառ, վոչ մի բանվոր,

կորսնտեսական, կորսնտեսաւէի չպետք է
զուրպ մնա հարվածայնությունից: Յերեք
տարի առաջ գյուղխորհուրդները ղեկավա-
րում էին առաջին հնգամյակի կառուցու-
մը, սոցիալիզմի հիմքն էին դնում:

Այժմ խորհուրդները պետք է ապահո-
վեն յերկրորդ հնգամյակի կառուցումը:
Յեւ անդասակարգ սոցիալիստական հա-
տարակության ստեղծելու համար գյուղ-
խորհուրդները պետք է վերակազմակեր-
պեն վոչ միայն մասնանների եկոնոմիկան,
այլև մասնանների գիտակցությունը»:

Հարց է առաջանում, կորսնտեսային պա-
տի թերթում պետք է տեղափոխել այսպիսի
ընդհանուր բնույթ կրող հոդված: Վոչ,
հարկավոր չէ: Ել չենք ասում, վոր այս հոդ-
վածն անգրագետի հոդված է թե՛ քաղաքա-
կանապես և թե տեսնիկապես: Այսպես որի-
նակ՝ այդ հոդվածում վոչ մի խոսք չի ա-
ված կոմունիստական կուսակցության ղերի
մասին՝ սոցիալիզմի հիմքի կառուցման գոր-
ծում:

Ընթերցողն իր «Լենինի պատգամը» թեր-
թից սպասում էր վոչ թե ղեկավար թերթերի
ընդարձակ հոդվածների անչնորհք կրկնու-
թյունը, այլ սպասում էր, վոր թերթն իրեն
պատմի, թե իրենց գյուղում ինչպես պիտի
կատարել գյուղխորհուրդի ընտրությունը, ում
ընտրել, ինչպես բարելավել իրենց խորհուրդի
աշխատանքը: Ընթերցողն սպասում էր,
վորպեսզի թերթը քննադատեր իր խորհուրդի

տեկցիաների և պատգամավորների աշխա-
տանքը: Իսկ պատի թերթն այսպիսի ընդհա-
նուր բնույթի հոդված տեղափոխելով վոչ վո-
քի վոչ մի ոգուտ չտվեց: Նա փուչ փամփուշո
պայթեցրեց, վորի աղմուկը մեծ է, բայց
գորությունը՝ փուչ:

Ասածիցս պարզ է, վոր վոչ բրիգադի,
վոչ կորսնտեսության պատի թերթը չպետք է
ընդորինակի խոշոր թերթերին և ընդհանուր
քաղաքական ու ընդհանուր տնտեսական
բնույթ կրող հոդվածներ տեղափոխի: Վոչ մի
միտք չկա, վոր պատի թերթը փորձի այնպի-
սի հոդվածներ գրել, ինչպիսին գրում են ղե-
կավար թերթերը: Կորսնտեսականն իրեն հե-
տաքրքրող հարցի մասին ընդհանուր հոդված-
ներ կարող է կարգալ այս կամ այն կենտրո-
նական, մարդային կամ շրջանային թերթում:
Այդտեղ նա կկարգա այնպիսի հոդվածներ,
վորոնք գրված կլինեն ավելի ճիշտ ու ավելի
հետաքրքիր ձևով, քան թե կարող են գրել
բրիգադի կամ կորսնտեսության պատի թեր-
թում: Ընդհանուր բնույթի խոշոր «համա-
մութենական մաշտարի» հոդվածներ տեղա-
փոխելու հակում ունեցող թերթերը հաճախ
կոպիտ սխալներ են անում այդ հարցերում:
Այնպիսի պատի թերթերը կտրվում են տեղի
կորսնտեսության, բրիգադայի կյանքից, այ-
լևս կորսնտեսային, բրիգադային պատի
թերթ չեն հանդիսանում:

Կան և այնպիսի պատի թերթեր, վորոնք,
թեև տեղական խնդիրներով են զբաղվում,

սակայն դարձյալ ճիշտ չեն աշխատում, վորովհետև իրենց բրիգադի մասին խոսում են անորոշ կերպով: Նրանք կոնկրետ կալանատեսականների անուններ չեն չեչտում: Բոլոր հարցերի մասին գրում են ընդհանուր արտահայտություններով: Յեթե այդպիսի թերթի անվանն ու տեղին չնայեա, յերբեք չես իմանա, վոր այդ բրիգադային պատի թերթ ե: Բայց չե՞ վոր պատի թերթն սպասարկում ե վոչ թե ընդհանրապես կոլտնտեսությունը ե վոչ թե ընդհանրապես բրիգադին, այլ հասկապես տվյալ կոլտնտեսությունը տվյալ բրիգադային, այսինչ, այսինչ կոլտնտեսականներին:

Բերենք մի որինակ: Վերցնենք Լենինգրադի մարզի Ոստրովսկու շրջանի Կալինինո գյուղի կոլտնտեսության «Ուղարնիկ» պատի թերթի № 9-ը: Այդ համարում տեղավորված ե այսպիսի մի հոդված.

«Մեր ժամկետը.

Մոտենում են ժամկետները, մոտենում ե և հաղթանակը: Յեվս մի հնգորյակ պետք ե հաղթանակողը լինի պետական մթերումներում—հացահատիկինը՝ մինչև 10/IX, վուչտրեստինը՝ 15/IX, խոտասերմերինը՝ 10/IX, հարզինը՝ 10/IX, ՄՏ կայանի բնավարձը ևս, այն հաշվով, վոր այդ ժամկետների համար պայքարելով պարտական չմնանք պետության առաջ: Պետք ե ծավալել վուչի ձեռքով մասսոյական մշար

6009
3976
39133

կուլթյունը և հոկտեմբերյան տոնակատարությունների նախորդակին լիովին վճարել պետության տալիքը»:

Այսպիսի հոդվածներ ևս պատի թերթում տեղավորել չի կարելի: Վորո՞ք են այս հոդվածի թերությունները.

1. Նրա մեջ միայն արձանագրության պես թված ե, թե յերբ և ինչ պետք ե հանձնել պետությանը: Սակայն այդ թղթակցությունից կոլտնտեսական ընթերցողը չի կարող իմանալ, թե արդյոք իր կոլտնտեսությունը պատրաստ ե այդ ժամկետին կատարելու իր պարտավորությունները պրոլետարական պետության հանդեպ: Բացի այդ, ընթերցողն այդ թղթակցությունից չի իմանում, թե կոլտնտեսությունն իր պարտավորություններից վորն ե կատարել, վորն ե մնում կատարելու, ով ե հետ մնում կոլտնտեսության մեջ: Հարկավոր եր թղթակցության մեջ պատմել, թե ինչ գրության մեջ ե հանձնումների գործը, պատմել կոլտնտեսության հանձնումների կազմակերպման հաջողությունների, սխալների և թերությունների մասին:

2. Թղթակցության մեջ վոչ մի խոսք չկա կոլտնտեսության կենդանի մարդկանց մասին: Այն, ինչ ասված ե այս թղթակցության մեջ, նույնը կարելի յե ասել հազարավոր ուրիշ բրիգադների ու կոլտնտեսությունների մասին:

3. Թղթակցությունը մի շարք կարևոր



խնդիրներ հարևանցիտրեն ե շոշափում, այդպիսի թղթակցությունը ընթերցողի մտքում վոչ մի հետք չի թողնի:

Վերցնենք այժմ մի ուրիշ թղթակցություն, ահա ինչ ե գրված նրա մեջ.

«Բերքահավաքի նախապատրաստությունը

Բերքահավաքին նախապատրաստվելը խոշոր դեր ե խաղում բերքն արագ հավաքելու գործում: Յեթե բրիգադը և ամբողջ կոլտնտեսությունը նախապատրաստված դիմավորեն բերքահավաքը, ապա նրանք կարող են ժամանակին ու առանց կորստի հավաքել կոլտնտեսության բերքը և իրենց հաշիվը մաքրել պետության հետ:

Բերքահավաքի նախապատրաստման ուղղությամբ ի՞նչ ե արել Դուրասովոյի «Հնգամյակի ջահը» կոլտնտեսության առաջին բրիգադը: Քաշող ուժը միջակ գիրություն ունի, գյուղատնտեսական ինվենտարը պատրաստված ե, բերքահավաքի մեքենաները՝ վերանորոգված ու կցված են առանձին լավագույն կոլտնտեսականների, գերանդիներն ու մանգաղները պատրաստ են, քաշող ուժը բաժանված ե 6 ողակի և յուրաքանչյուր ողակին առանձին հողամաս ե կցված»:

Ահա ամբողջ թղթակցությունը:

Առաջին հայացքից թվում ե, թե այդ թղթակցության մեջ խոտվում ե բրիգադի մասին:

Սակայն իրականում թղթակցությունը հավատացնում ե, թե կոլտնտեսության մեջ ամեն ինչ լավ ե: Դուրս ե դալիս, վոր յեթե ամեն ինչ լավ ե, ապա ուրեմն այլևս բերքահավաքին պատրաստվելու բան չկա: Մինչդեռ այդ ճիշտ յեզրակացություն չե: Իսկ ինչո՞ւ յե այդպիսի յեզրակացություն ստացվում: Վարավհետե թղթակցությունը գրված ե ընդհանուր բառերով:

Այս թղթակցությունից չի յերևում «Ծամ-յակի ջահը» կոլտնտեսության առաջին բրիգադի գործերի գրությունը: Յեվ իրոք, հավանորեն բրիգադի մեջ վոչ բոլոր կոլտնտեսականներն են լավ աշխատում: Հավանորեն այնտեղ կան և՛ առաջավորներ և՛ հետ մնացողներ: Պարտի թերթը պետք ե ցույց տար և՛ առաջավորներին և՛ հետ մնացողներին, պետք ե պատմեր, թե բրիգադն ի՞նչ բանումն ե ուժեղ պատրաստվել և ինչ բանումն ե թույլ: Գուցե և հարկավոր կլիներ պատմել, թե կոլտնտեսականներն ինչպե՞ս պետք ե աշխատեն ըստ ողակների և ըստ հողամասերի:

Թերթը պետք ե կարողանա դիմել վոչ միայն «բոլորին, բոլորին, բոլորին» այլ յուրաքանչյուր մարդուն: Մինչդեռ այն թղթակցությունը, վոր մենք քննեցինք, գրված ե ընդհանուր բառերով:

Անհայտ ե, թե վորոշակի ում ե ուղղված այդ թղթակցությունը: Ավելի լավ կլիներ, յեթե պատի թերթն այսպիսի թղթակցություն տեղավորելու փոխարեն պատմեր, որինակ, թե

այսինչ կոլտնտեսականներէց բաղկացած ողա-
կը բերքահավաքի պլան ե կազմել և վորն և
այդ պլանը: Կարելի յեր այդտեղ վերլուծել
անհաճող պլանը, կամ ցույց տալ լավ պլանի
առավելութունները: Հարկավոր եր քննադա-
տել նրանց, ովքեր դեռևս բերքահավաքին
պատրաստ չեն, կամ վատ են պատրաստված:

Վերը բերած թղթակցության մեջ նշված
են բերքահավաքի համարյա թե բոլոր հարցե-
րը: Յերբ մարդ ուզում ե ամեն բանի մասին
խոսել, հաճախ կարգին չի խոսում վոչ մի բա-
նի մասին: Դրա համար ել, ավելի լավ ե բեր-
քահավաքի կամպանիայի մասին տեղավորել
մի քանի թղթակցություն, բայց այնպես, վոր
յուրաքանչյուր թղթակցությունն, ինչպես
հարկն ե, լուսաբանի բերքահավաքի կամպա-
նիայի այս կամ այն հարցը: Հարկավոր եր ա-
ռանձին թղթակցություն գրել քաջող ուժի մա-
սին, առանձին թղթակցություն՝ բանվորական
ուժի մասին, առանձին՝ կարգապահության
մասին և այլն և այլն:

Այժմ մենք ցույց կտանք լավ որինակներ:
Ահա մեր առաջ ե մի ուրիշ պատի թերթ:
Առաջին հերթին տեղավորված ե առաջնորդող
'հոդվածը՝ «Ուր ե պայքարը կորուստների
դեմ» վերնագրով: Այդ փոքրիկ հոդվածի մեջ
ասված ե.

«Տնտեսական տարվա սկզբում մենք ա-
սում և թերթում գրում եյինք, վոր պետք ե

պայքարենք յուրաքանչյուր հատիկի հա-
մար: Այժմ նայենք փաստերին և տեսնենք,
թե ինչպես ե կիրառվում կուսակցության
վորոշումը և մենք ինչպես ենք կենսագոր-
ծում մեր խոստումը:

№ 2 բրիգադի վարսակը մասամբ կերց-
րել են: Վարսակի ցանքերի ճանապարհնե-
րը կարգավորված չեն և կարող են կո-
րուստների տեղիք տալ: Հասկահավաք չի
կազմակերպվում, № 1 բրիգադի ցանած
ձակնդեղն ամեն որ դողանում են: Կուլիկո-
վի կովը վարսակի և վիկի ամենորյա
հյուրն ե»:

Այս գործնական թղթակցության տակ
գրված ե նրա հեղինակի լրիվ ստորագրությու-
նը՝ Պոտապով: Այդ լավ ե:

Լավ ե և այն, վոր պատի թերթի այդ նույն
համարում աշնանացանի մասին առանձին թղթ-
թակցություն ե տեղավորված: Լավ ե, վոր
այդ թղթակցությունը բոլոր ընթերցողների
ուշադրությունն ե հրավիրում № 1 առաջավոր
բրիգադի վրա, վորը պատրաստ ե ցանքին:
Յերկրորդ թղթակցությունը ևս ստորագրված
ե իր հեղինակի ազգանունով՝ Բարաչկով:

Յերրորդ թղթակցությունը ցուչի նախա-
կան մշակության հարցն ե բարձրացնում: Այդ
թղթակցությունը գրում ե կոլտնտեսուհի Նա-
բորովան:

Չորրորդ թղթակցությունը «Հանձնել մա-
քուր հացահատիկ», վերնագրով, ստորա-
գրված ե ընկ. Վոլիովի կողմից: Սուրբ փթե-

լու մասին խոսում ե մի առանձին թղթակցու-
թյուն, վորը նույնպես ստորագրված ե հեղի-
նակի—Սոկրուվի լրիվ ազգանունով:

Թերթում ուրիշ շատ թղթակցություններ
ել կան: Նրանցից յուրաքանչյուրը խոսում ե
մի վորեե փաստի մասին և ստորագրված ե
հեղինակի ազգանունով: Յուրաքանչյուր թղթ-
թակցության մեջ խոսվում ե վորոշակի փաս-
տի մասին, ճշտորեն նշվում ե, թե այս կամ
այն թերթի համար ով ե մեղավոր: Այս
հանգամանքը պատի թերթը դարձնում ե գործ-
նական և հետաքրքիր: Այսպիսի թերթն, ան-
համեմատ, ավելի լավ ե այն թերթից, վորը
տեղավորում ե ընդհանուր հոգվածներ, վոր
տեղ թղթակցությունների տակ կենդանի
մարդկանց ստորագրությունների փոխարեն
մտացածին ստորագրություններ (կեղծ անուն-
ներ) են գրված, ինչպես որինակ «Աչք», «Կոլ-
խոզնիկ», «Տեսնող», «Դիտող» և այլն:

Այս պատի թերթում ընդհանուր հոգված-
ներ չկան որինակ՝ կորուստների դեմ պայքա-
րելու կամ աշնանացանի նշանակության մա-
սին: Յե՛վ կորուստների և՛ աշնանացանի մա-
սին պատի թերթը խոսում ե տեղական փա-
տերի լեզվով, առանձին բրիգադաների ու
մարդկանց աշխատանքի որինակներով:

ՇԱՐԱԴՐԵԼՈՒ ԱՌԱՆՁԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵ- ՐԸ ԲՐԻԳԱԴԱՅԻՆ ՊԱՏԻ ԹԵՐԹՈՒՄ

Մենք արդեն խոսեցինք այն հարցերի մա-
սին, վորոնցով պետք ե հետաքրքրվեն կոլտըն-
տեսային կամ բրիգադային պատի թերթերը:
Ի՞նչ ձևով լուսարանել այդ թուրը հարցերը
պատի թերթում: Բրիգադային պատի թերթն
իր առանձնահատկություններն ունի նաև շա-
րադրելու ձևի մեջ: Հիմնական ձևը պետք ե
լինի կարն ու փաստացի քրթակցությունը և
կոլտնտեսականի նամակը, անպայման նշելով
քրթակցության մեջ, թե խոսվն ում և ինչի՞ն
ե վերաբերվում:

Խիստ կարևոր ե նաև պատի թերթում ամ-
փոփումներ տպելը՝ որվա կամ հնգորյակի ըն-
թացքում բրիգադի կատարած աշխատանքի
մասին: Սակայն այստեղ ևս չպետք ե ընդո-
րինակել ընդհանուր, համապետական ամփո-
փումների այն ձևերը, վորոնք տպվում են
«Պրամիդա»-ում կամ մյուս ղեկավար խոշոր
թերթերում: Պատի թերթում ամփոփումներն
այնպես պետք ե տրվեն, վոր հասկանալի լինի
յուրաքանչյուր, նույնիսկ կիսագրագետ բն-
թերրողին: Պատի թերթի ամենալավ ամփո-
փումներն կլինեն այն ամփոփումները, վորոնք
լուսարանում են յուրաքանչյուր առանձին կոլ-
տնտեսականի, յուրաքանչյուր ողակի աշխա-
տանք (և վոչ թե միայն ամբողջ կոլտնտեսու-
թյան կամ ամբողջ բրիգադի աշխատանքը):

Ոգտակար է նաև պատի թերթում կար-
միր ու սև տախտակներ տեղավորելը: Թե
ինչպես պետք է կազմել կարմիր ու սեւ տախ-
տակները, այդ մասին մենք կխոսենք մյուս
զասակոսության մեջ: Այդ տախտակները
պետք է տեղավորել մեծ գզուշությամբ:
Պետք է հետևել վոր մարդուն կարմիր ու սեւ
տախտակների բարձրացնելը կոլտնտեսու-
թյան կամ բրիգադի ամբողջ հասարակայնու-
թյան գործը լինի: Չի կարելի մարդուն սև
կամ կարմիր տախտակին բարձրացնել միայն
խմբազրի կամ քով, կամ պատահարաբար:

Խիստ կարեւոր է պատի թերթերում խրա-
խուսել մեր կոլտնտեսականների ստեղծագոր-
ծական ձգտումը՝ տեղավորելով նրանց պատմու-
վածքները, վրտանավորները և այլն: Պատի
թերթում պետք է ունենալ այնպիսի հետա-
քրքիր սյունակ, ինչպիսին է՝ «կոլտնտեսա-
կանի հնարագիտություն», կամ՝ «մեմ անու-
ջարկում եմ»: Այստեղ պետք է տեղ գտնեն
բրիգադի անդամների բոլոր արժեքավոր
առաջարկությունները:

Ոգտակար է յերբեմն-յերբեմն պատի
թերթում ունենալ հետևյալ բաժինները՝

«Արտադրական խորհրդակցություններից»
«Կուսակցական կազմակերպությունում»,
«Լոմյերիտական կազմակերպությունում»,
Գյուղխորհրդում», «կոլտնտեսության վար-
չությունում», «վերստուգիչ հանձնաժողովում»:
Այդ բաժիններում կարելի չէ պատմել
բրիգադային թուուցիկ և այլն խորհրդակցու-

թյուններում կոլտնտեսականների ունեցած
յելույթների մասին, տեղական կազմակեր-
պությունների ընդունած վորջումների մա-
սին, այնտեղ յեղած հետաքրքիր առաջար-
կությունների մասին:

Լավ է պատի թերթում տեղավորել «Բրի-
գադի բնահատականը բրիգադի տեղամների
աշխատանքի մասին»: Այդ բրիգադի բնու-
նեղութունը ամենալավ ձևերից մեկն է պատի թեր-
թի համար:

Հարկավոր է պատի թերթում տեղ տալ
մրցությանը—«ով ում», «ով է առաջից գր-
նում», «ով է հետ մնում»:

Ոգտակար է պատի թերթում տեղավորել
կոլտնտեսականներին հետաքրքրող նորու-
թյուններ՝ կոլտնտեսության կյանքից: Լավ
է, որինակի համար, այսպիսի բաժիններ ու-
նենալ. «կոլտնտեսության ֆերմայում»,
«Հարևան կոլտնտեսություններում և բրի-
գադներում», «կուլտուր կենցաղային կազմա-
կերպություններում», «Նորություններ ՊԱԶԸ
Ավիաֆիմի աշխատանքներում», «Շրջանային
նորություններ», «Հատվածներ կենտրոնական
քերքերից», կամ «Շրջանային քերքում կար-
դացեմ այսինչ նյութը»:

Վորոնեժի մարզի Լև Տոլստոյի շրջանի
Իվանովսկ գյուղի «Յերկրորդ հնգամյակ» պա-
տի թերթի խմբագրերը շատ լավ է արել, վոր
պատի թերթում հատվածներ է կպցրել կենտ-
րոնական թերթերից: Որինակ՝ այդ պատի
թերթի համարներից մեկում հատվածներ են

կպցրած ընկ. Վորոշիլովի ճառից, վոր նա արտասանել է Համ.Կ.(Բ)Կ. XVII համագումարում:

Վերջրեք, որինակ, կուսակցութեան կենսորոնական կոմիտեյի, ԽՍՀՄ Ժողովրդական կոմիտարներին խորհրդի, մարդային կուսակցական ու խորհրդային կազմակերպութեաններին այս կամ այն կարևորագույն վորոշումը: Իհարկէ, անհնարին է պատի թերթում լիովին շարադրել այդ վորոշումները: Բայց կարելի չէ տպագիր թերթերից կտրել այդ վորոշումները և կպցնել պատի թերթում, կամ թերթի մոտ, մի առանձին տեղ:

Պատի թերթի խմբագիրը կուսակազմակերպչին և կոլտնտեսութեան ակտիվին պետք է ոգնի՝ կոլտնտեսականներին ծանոթացնելու ընդհանուր քաղաքական անց ու դարձին:

Ոգտակար է, որինակ, հատուկ տախտակի կպցնել «Պրավդայի», «Կրեստյանսկայա զագետա»-յի համարները: Ոգտակար է այդպիսի մի տախտակի կպցնել զանազան թերթերում իրենց կոլտնտեսութեան մասին տրպված թղթակցութեանները:

Մի շարք պատի թերթերի խմբագիրներ կուսակազմակերպիչների հետ միասին և նրանց ցուցումներով քաղաքականապես ավելի պարաստ թղթակիցներին հանձնարարում են տպագիր թերթերից բարձրաձայն ընթերցանութեաններ կազմակերպել: Այդ շատ ոգտակար գործ է: Միայն պետք է հիշել, վոր տպագիր թերթերի ընթերցանութեանը պետք

և հանձնարարել լավ պատրաստված ընկերների, վորոնք իրենք էլ շարունակ թերթ են կարդում: Թերթ կարդացողը պետք է կարողանա կարգալ բարձրաձայն և պարզ, անհասկանալի բառերը բացատրել կամ պատմել, թե վորտեղ է գտնվում այն յերկիրը կամ քաղաքը, վորոնց անունները տրվում են թերթում, պետք է կարողանա բացատրել թերթի բարձրացրած այս կամ այն հարցի նշանակութեանը: Կարդացողը պետք է լավ նախապատրաստվի տպագիր թերթի յուրաքանչյուր համարի ընթերցանութեանը:

Կոլեկտիվ բարձրաձայն ընթերցանութեան փորձը շատ տեղ կա արդեն: Թերթերի բարձրաձայն ընթերցանութեանն առանձնապես լայն ծավալված է յերկաթուղային տրանսպորտում: Յերկաթուղային տրանսպորտի աշխատողների խորհրդակցութեանում ընկ. Լ. Մ. Կազանովիչն ասաց. «Կան մասսայական աշխատանքի մի շարք տարրական ձևեր, ինչպես որինակ՝ քերքերի ընթերցումը, վորոնցից էլ պետք է սկսել»: Նշելով, վոր շատ յերկաթուղայիններ թերթ չեն կարդում, ընկ. Կազանովիչն այդ խորհրդակցութեանում ասում է. «Այժմ անհրաժեշտ է նախագուշացնել, վոր յերթ մենք յերկու ամիս հետո հայտարերենք մի վորքե տեղ, ուր մասսայական աշխատանքի նույնիսկ այնպիսի տարրական ձևերը չկան, ինչպիսին է քերքերի ընթերցումը; ապա այդ պիտի նշանակի, վոր ըստ էյութեան այնտեղ քաղաքային

չկա և մենք այդ ֆաղրաժնին կխայտառակենք
ամբողջ հոբիրդային Միուրթյան մեջ»: Այս
խոսքերից յերևում է, վոր թերթերի բարձրա-
ձայն ընթերցանությունը մեծ նշանակություն
ունի:

Ի այց պատի թերթում ինչպե՞ս լուսարա-
նել կուսակցական ու կառավարական կազմա-
կերպությունների կարևոր վորոշումները:

1

Յեթե հրատարակվել է կուսակցության
կենտրոնական կոմիտեյի, ԽՍՀՄ Ժողովրդա-
կան կոմիսարների Խորհրդի, կամ Կենտկոմի
պլենումի վորեւե կարևոր վորոշումը, ապա
պատի թերթի խմբագիրն ամենից առաջ
պետք է կուսակազմակերպչին ողնի, վոր վոր-
քան կարելի յե շուտ այդ վորոշումների
բարձրաձայն ընթերցանություն կազմակերպ-
վի բրիգադներում, բացատրվեն ու քննու-
թյան առնվեն այդ վորոշումները: Այդ աշխա-
տանքի արդյունքների մասին պետք է գրվի
պատի թերթում:

2

Պատի թերթում հատուկ հոդվածով կտ-
րելի յե ընթերցողների ուշադրությունը հրա-
վիրել այն բանի վրա, վոր «Պրավդա»-յում,
«Կրեստյանսկա Գաղետա»-յում կամ մար-
զային, կամ հանրապետական, շրջանային
թերթի այսինչ համարում տպված է այս-
ինչ վորոշումը: Այդ նույն հոդվածում պետք

է համառոտակի պատմել, թե ինչ է ասված
այդ վորոշման մեջ, ինչ նշանակություն ունի
նա, այդ վորոշման մասին վորտեղ և ինչ կա-
րելի յե կարգալ, կոլտնտեսությունում ով
կարող է այդ ուղղությամբ առաջացած հար-
ցերին պատասխանել:

3

Յերբ վորոշումից հասվածներ է տեղա-
վորվում պատի թերթում, նույն համարում
պետք է պատմել, թե կոլտնտեսությունում
ինչ է արվում, կամ ինչ պետք է անել այդ
վորոշումը կենսագործելու համար:

Շրջանային ու տեղական կազմակերպու-
թյունների առանձնապես կարևոր վորոշում-
ները (կոլտնտեսություններին վերաբերող)
պետք է համառոտակի և պարզ, բոլորին հաս-
կանալի լեզվով բացատրել պատի թերթում:

4

Պատի թերթը պետք է հետևի, թե կոլ-
տնտեսության մեջ ինչպես է կազմակերպված
կուսակցության կամ կառավարության վորո-
շումների ամենորյա, բանավոր բացատրու-
թյունն ու պարզաբանումը կոլտնտեսական-
ներին, ինչպես է դրված ֆաղափական ինֆոր-
մացիան միջազգային դեպքերի մասին,
մեր սոցիալիստական արդյունաբերության և
գյուղատնտեսության աշխատանքի մասին,
Խորհրդային Միության մեջ տեղի ունեցող
կարևորագույն դեպքերի մասին:

Հարկավոր է, վոր բոլոր կոլտնտեսականներին եմենատնտեսներին պարզ լինի կուսակցութեան ու կառավարութեան յուրաքանչյուր կարևոր վորոշման իմաստն ու նշանակութիւնը: Այնտեղ, ուր մենք այդ վորոշումների շուրջը մասսայական աշխատանք չենք կատարում, մեր անգործութիւնից կարող է ոգտվել դասակարգային թշնամին և կփորձի իր ցանկացած ձևով մեկնաբանել մեր միջոցառումների նշանակութիւնը: Դասակարգայնորեն խորթ տարրերն ամենից շատ ակտիվութիւն են հայտնաբերում հենց այստեղ, ուր գյուղական կոմունիստները, կոլվարչութիւնների և գյուղխորհուրդների անդամներն ու աշխատողները, գյուղթղթակիցներն և մյուս ակտիվիստները բավարար չափով քաղաքական զգոնութիւն չունեն, «մատների արանքով» են նայում թշնամու յելույթներին:

Ահա թե ինչու կարևոր է, վոր պատի թերթն ինքը բացատրական աշխատանք կատարի և տեղական կազմակերպութիւններին ոգնի կարգավորել քաղաքական ինֆորմացիան, ազիտացիան, թերթերի ընթերցանութիւնը, զրույցները և այդպիսով ուժեղացնի կոտնտեսականների դասակարգային զգացմունքը:

Մեր կուսակցութեան կենտրոնական ու Լենինգրադի կոմիտեների քարտուղար ընկ. Կիրովի սպանութիւնը՝ հակահեղափոխական գիծով և կան խմբակի անդամ շարագործի ձեռքով, նախազգուշացնում է մեզ այն մասին,

վոր անհրաժեշտ է միշտ և ամնուրեք դասակարգային սուր գգոնութիւն ունենալ:

ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ ԸՆԾԱՅԵԼ ԱՌԱՆՑ ԸՆԴՅԱՏՈՒՄՆԵՐԻ

Պատի թերթի լավ խմբագիրը յերբեք չի ասի՝ «Յե՛ս մենակ եմ լույս ընծայում թերթը», — ինչպես սիրում են ասել շատ ընկերներ:

Լավ խմբագիրը կասի.

— Թերթը լույս ենք ընծայում մենք (այսքան հոգով):

Դրա համար ել չի կարելի պատի թերթ հրատարակելիս հույս դնել միայն նրա վրա, վոր կա խմբագիր: Սխառ կարևոր է՝ խմբագրի հետ ունենալ պատի քերքի խմբագրական կոլեգիա:

Պետք է հոգ տանել, վոր խմբագրական կոլեգիայի անդամները լինեն բոլոր կոլտնտեսականներից հարգված լավագույն հարվածայինները: Պատի թերթի խմբագիրը պարտավոր է խմբակի բոլոր անդամներին մասնակից անել թերթի ամենորոյա աշխատանքներին: Այստեղ ամեն ինչ կախված է խմբագրից:

Սմբակի ընտրութիւններն ու վերընտրութիւնները պետք է լավ նախապատրաստել ու կատարել: Սմբակում պիտի ընտրվի վոչ թե գյուղթղթակիցների նեղ խորհրդակցութիւնում, այլ՝ կոլտնտեսականների ընդհա-

նուր ժողովում: Նախորոք բոլոր կոլտնտեսա-
կաններին պետք է բացատրել, վոր խմբկուլի
մեջ հարկավոր է ընտրել խորհրդային իշխա-
նությանն ու կոլտնտեսային գործին ամենից
չատ նվիրված մարդկանց, արտադրության
հարվածայիններին, ազնիվ աշխատավորնե-
րին: Ընտրությունից առաջ պետք է հրապար-
ակել պատի թերթի հաշվետվությունն իր
աշխատանքի մասին, վորպեսզի կոլտնտեսա-
կանները քննության առնեն խմբկուլի հին ան-
դամների աշխատանքը:

Առաջիկա ժողովի և խմբկուլի վերընտրու-
թյան մասին պետք է լայնորեն տեղեկացնել
կոլտնտեսականներին (պատի թերթի միջո-
ցով, հրավիրատոմսերով, պլակատներով և
հայտարարություններով): Խմբկուլի մեջ ըն-
տրվածներից ուցակը պետք է ուղարկել չրջա-
նային թերթի խմբագրությանը:

Խմբկուլի ընտրությունից հետո խմբագրի-
րը պետք է բոլորին վորոշակի աշխատանք
տա. մեկին դարձնի իր տեղակալը, մյուսին
հանձնարարի այս կամ այն արտադրական
խնդիրը, յերրորդին՝ բրիգադի վորոշակի
բնագավառը և այլն: Վորպեսզի խմբկուլը
չցրվի, ինչպես այդ հաճախ տեղի յե ունե-
նում, հարկավոր է սխտեմատիկաբար նիս-
տեր հրավիրել պատի թերթի հերթական հա-
մարը բաց թողնելուց առաջ, ապա՝ համարը
լույս ընծայելուց հետո՝ հետևյալ համարի
պլանը քննության առնելու համար և մյուս
բոլոր կարևոր դեպքերում:

Այս բոլորի հետ աչալուրջ պիտի հետե-
վել, վոր խորթ մարդիկ դասակարգային
թշնամիներ ու մութ անձնավորություններ
չընկնեն խմբկուլի մեջ, վորպեսզի դասակար-
գային զգոնության կորստյան հետևանքով
պատի թերթը դասակարգային թշնամու
թմբկահարը չդառնա:

ՊԱՏԻ ԹԵՐԹԻ ԱԿՏԻՎԸ

Խմբկուլի աշխատանքի ամենորյա ղեկա-
վարը խմբագիրն է: Այդ պատի թերթի հա-
ջողության առաջին պայմանն է: Խմբկուլի
հենց առաջին նիստում խմբագիրը պետք է
աշխատանքի բաժանում կատարի խմբկուլի
անդամների միջև: Խմբկուլի յուրաքանչյուր
անդամ պետք է թերթում վորոշակի աշխա-
տանք ունենա, շարունակ հետևի վորոշակի
հարցերի կամ կոլտնտեսային աշխատանքի
վորոշակի բնագավառի:

Պատի թերթի խմբագիրը պետք է թեր-
թում աշխատի վորպես պատասխանատու
խմբագիր, այսինքն՝ կուսակազմակերպության
ու կոլտնտեսականների առաջ անձամբ պա-
տասխանատու լինի թերթի համար: Միա-
ժամանակ նա պետք է կարողանա կոլեկտիվ
աշխատանք կատարել, այսինքն՝ աշխատան-
քի մեջ քաշել կոլտնտեսային ակտիվը, հետա-
քրքրել բոլոր գյուղթղթակիցներին:

Կոլտնտեսային և բրիգադային պատի
թերթի խմբագրի խնդիրն է՝ յուրաքանչյուր

հարվածային— գյուղթղթակցի սիստեմա-
տիկորեն մասնակից անել պատի թերթի աշ-
խատանքին: Պատի թերթի խմբագիրը պետք
է համերաչխ աշխատի գյուղթղթակիցներէ
կուլեկտիվի հետ: Լինել նրանց ղեկավարը և
միաժամանակ սոյաբել նրանցից՝ ուշադիր
լսելով նրանց առաջարկութիւնները, ար-
ձագանքելով յուրաքանչյուր հետաքրքիր ու
առողջ մտքի: Խմբկու կազմելիս և նրա շուր-
ջը գյուղթղթակիցների ակտիվ համախմբե-
լիս՝ խմբագիրը պետք է սակեալուրջ ուշա-
դրութիւն դարձնի, վորպեսզի խմբկուի ու
գյուղթղթակցային ակտիվի մեջ ավելի շատ
կոլտնտեսուհիներ լինեն:

Խմբկուի ու գյուղթղթակիցների միջև
համերաչխ աշխատանք ստեղծելով՝ վոչ մի
գեպքում չի կարելի թույլ տալ, վոր գյուղ-
թղթակիցներն ու խմբկուը կտրվեն մյուս
կոլտնտեսականներից: Ընդհակառակն,
գործն այնպես պիտի դնել, վոր յուրաքան-
չյուր ազնիվ կոլտնտեսական հրապուրվի պա-
տի թերթի աշխատանքով և կարողանա մտնել
գյուղթղթակիցների շարքերը:

Կարևոր է հետևել նաև, վոր պատի թեր-
թի ակտիվի մեջ միմիայն յերիտասարդներ չլի-
նեն, ինչպես հաճախ լինում է, այլ և հասա-
կափոր կոլտնտեսականներ: Հարկավոր է,
վոր գյուղթղթակիցների շարքերում լինեն
նաև այնպիսի պրոֆեսիայի աշխատողներ,
ինչպիսիք են տրակտորիստը, կոմբայնո-
վարը և այլն:

Թերթը պատրաստում են վոչ միայն խմ-
բագիրն ու խմբկուի անդամները, այլ բոլոր
գյուղթղթակիցները, բոլոր ազնիվ կոլտնտե-
սականները: Դրա համար ել խմբագրի ու
խմբկուի անդամների առաջնահերթ պարտա-
կանութիւնն է՝ թերթի շուրջն ստեղծել հար-
վածային-գյուղթղթակիցների ուժեղ ակտիվ:
Կարելի յէ յերբեմն հրավիրել հատուկ ընթեր-
ցողների ժողովներ, վորտեղ կոլտնտեսական-
ները քննութիւն կառնեն և կքննադատեն պա-
տի թերթը: Պատի թերթի մասին կոլտնտե-
սականների կարծիքը կարելի յէ իմանալ նաև
նրանց հետ շարունակ գրույցներ ունենալով:
Հերթական արտադրական խորհրդակցու-
թիւններում ևս կարելի յէ իմանալ կոլտնտե-
սականների կարծիքը պատի թերթի մասին:
Լալ կլինի, յէթէ խմբկուի նիստերին և գյուղ-
թղթակիցների ժողովներին հրավիրվեն նաև
պատի թերթի աշխատանքով հետաքրքրվող
բոլոր կոլտնտեսականները: Այդ կնպաստի,
վոր նրանք ավելի արագ մասնակից լինեն
պատի թերթի աշխատանքներին: Պատի թեր-
թի խմբագիրը պետք է ուշադիր լսի կոլտն-
տեսականների առաջարկութիւնները և կա-
տարի գրանք:

Բոլոր կոլտնտեսականներին պատի թեր-
թի աշխատանքներով հետաքրքրելու շատ ար-
ժեքափոր միջոց է նաև տպված յորակցու-
թիւնների քննարկումը կոլտնտեսութիւն կամ
բրիգադի ժողովներում, կուսկազմակերպու-
թիւն նիստերում, կոլվարչութիւն, գյուղ-

խորհրդի նիստերում: Աշխատանքի այդ ձևը շատ կոլտնտեսային պատի թերթեր են կիրառում: Այդ շատ լավ արդյունք է տալիս: Կորտնտեսականները տեսնում են, վոր պատի թերթին նամակ գրելը հասարակական մեծ աշխատանք է և վոր թղթակիցների աշխատանքը քիչ ոգուտ չէ տալիս կոլտնտեսութեանն ու բրիգադին: Կարևոր է պատի թերթում շարունակ պարզել, թե ինչ արդյունք ունեցան նախորդ համարներում տեղավորված թղթակցութեանները: («Ինչ է արված այսինչ ընկերների թղթակցութեան առթիվ»): Թղթակցութեանների արդյունքի մասին շարունակ տեղեկութեաններ պիտի տալ նաև հերթական ժողովներում, արտագրական խորհրդակցութեաններում, կոլտնտեսականների յերեկույթներում:

Պետք է ձգտել, վոր պատի թերթը յուրաքանչյուր ազնիվ կոլտնտեսականի տրիրունը դառնա: Հարկավոր է, վոր նա՝ ազնիվ կոլտնտեսականը միշտ կարողանա արտահայտվել պատի թերթում, քննադատել ում վոր պետք է, արժեքավոր առաջարկութեաններ անել, բողոքել վորևէ բանի դեմ: Մի կոլտնտեսական մի զրույցի ժամանակ շատ հաջող կերպով ասաց, թե ինքն ինչպես է հասկանում կոլտնտեսային կամ բրիգադային պատի թերթի նշանակութեանը.

«Առաջ, մինչև խորհրդայնացումն էլ յետ կարիք էյի գտում իմ գործերի մասին խոսել վորևէ մեկի հետ, ասենք թե՛ անտե-

տութեան մասին կարծիքներ փոխանակելու հայց ինչպե՞ս էյի անում այդ. հանդիպում էյի հարևանիս և զրուցում էյի նրա հետ պատի վրա նստած: Յե՛վ ինչ վոր ասում էյինք, մեր մեջ եր մնում, մի քանի մարդու մեջ: Իսկ այժմ կոլտնտեսութեան մեջ ո՞վ է իմ հարևանը. բրիգադի ամեն մի անգամը: Թերթը՝ այդ այն տեղն է, վորտեղ յես հանդիպում եմ վոչ թե մեկ հարևանի հետ, այլ իմ բոլոր հարևանների հետ միանգամից»:

ԱՇԽԱՏԵԼ ՊԼԱՆՈՎ

Վորպեսզի յուրաքանչյուր բրիգադային թերթ ժամանակին յույս տեսնի, նա պետք է ունենա իր պլանը: Խմբագրական աշխատանքը՝ այդ աշխատանքի ղեկավարութեան միջոցն է: Խմբագիրն ամբողջ ակտիվի հետ միասին պետք է կազմի թերթի ինչպես հերթական համարի, այնպես էլ ամբողջ աշխատանքի պլանը: Պլանը կազմելիս պետք է նկատի ունենալ վոչ թե միայն համարներ կազմելը, այլ և գյուղաօրհանների մեջ կատարելիք ու թերթում կամպանիաներ կազմակերպելու պլանը:

Պլանը՝ այդ գործունեութեան ղեկավարութեանն է: Պլանը պետք է ճկուն լինի և համապատասխանի որվա տնտեսական-քաղաքական խնդիրներին: Սակայն, հասկանալի չէ, վոր յուրաքանչյուր նոր դեպք, յուրա-

քանչյուր նոր փաստ պետք է նշված լինի պատի թերթում, յեթե նույնիսկ այդ բանը նախատեսված չլինի աշխատանքի պլանով:

Շատ հաճախ կոլտնտեսականներն իրենց նամակներով այնպիսի կարևոր հարցեր են բարձրացնում, վոր խմբագիրը չի նախատեսել: Ահա թե ինչու խմբագիրը բացառիկ ուշադրություն պիտի դարձնի այդ նամակների վրա: Յեթե այդպիսի նամակներ քիչ են ստացվում, նշանակում է պատի թերթը լավ չի աշխատում: Ընդհակառակը, յեթե պատի թերթը լավ է աշխատում, միշտ ել շատ նամակներ են ստացվում:

Յեթե մի վորևէ կամպանիա յե անց կացվում, խմբագիրը պետք է լավ ծանոթ լինի կուսկազմակերպության, գյուղխորհրդի պլանին, այդ կամպանիայի խնդիրներին ու անդկացնելու միջոցներին:

Լոյտնտեսության ու բրիգադի արտադրական պլանը, կուս-մասսայական աշխատանքի պլանը, գյուղխորհրդի աշխատանքի պլանը, կոլտնտեսականների նամակները, — ահա թե խմբագիրն ու խմբկույր վորտեղից պիտի փաղեն իրենց նյութերը՝ պատի թերթի պլանը կազմելու համար:

Պատի թերթի համար առանձնապես կարևոր է կամպանիաների պլանն ունենալը: Յեթե, ասենք, սկսվում է զարնանացանի կամպանիան, ապա հարկավոր է ունենալ այդ ամբողջ կամպանիայի ընդհանուր պլանը: Ինչպես ես պատկերացնում քո պատի թերթը

ցանքի ընթացքում, ինչի համար պիտի պայքարես, վորքան շուտ-շուտ պիտի լույս ընծայես թերթը, աշխատանքի ինչպիսի հետաքրքիր ձևեր ցանկալի յե կիրառել (ռեյդ, մրցություն) և այլն և այլն: Ունենալով ամբողջ կամպանիայի այսպիսի մի պլան, արդեն հեշտ կլինի կազմել պատի թերթի հերթական համարի, յերկու-յերեք համարի պլանը:

Խմբագիրն ու խմբագրական կոլեգիան պետք է խստորեն հետևեն նշված պլանի կատարմանը: Խմբագիրը պետք է հսկի խմբկույրի անդամների ու գյուղթղթակիցների աշխատանքին, սուղի, թե նրանցից յուրաքանչյուրն ինչպես է կատարում պլանով իրեն հանձնարարած աշխատանքը: Միևնույն ժամանակ խմբագիրը պետք է ոչնի խմբկույր յուրաքանչյուր անդամին ու յուրաքանչյուր գյուղթղթակիցին, վոր նա ժամանակին ու լավ կատարի իրեն հանձնարարած աշխատանքը:

Ինչը պիտի կազմի պատի թերթի պլանի հիմքը:

Պատի թերթի պլան կազմելու համար հիմք պիտի ծառայեն կուսկազմակերպչի պլանը, բրիգադի կամ կոլվարչության պլանը, կուսակցության շրջումի վորոշումները, կոլտնտեսականների նամակները:

Խմբագրական աշխատանքի պլան կազմելու խիստ կարևոր է հիշել Լենինի ցուցումը, թե՛ «Ամեն բոպե պետք է կարողանալ

գտնել շղթայի այն հիմնական սղակը, վորից
հարկավոր է ամբողջ ուժով բռնել, վորպես-
գի կարելի լինի պահել ամբողջ շղթան և նա-
խապատրաստել հաստատուն անցումը՝ մյուս
տղակին...» Բայց ինչպե՞ս գլուխ հանել
բազմաթիվ հարցերի միջից և ինչպե՞ս գտնել
այդ գլխավոր սղակը: Ահա հենց այստեղ է,
վոր խմբագրին ոգնության կզան կուսկադ
մակերպչի պլանը, կամ բրիգադի ու կոլ-
անտեսության և շրջանային կազմակերպու-
թյունների պլանը:

Անպլանայնությունը թերթում հասցնում
է այն բանին, վոր թերթն սկսում է հեռ
մնալ կյանքից, դեպքերի պոչից և քարշ գա-
լիս և անընդունակ է լինում մասսաներին
կազմակերպել: Անցյալ տարի այդպիսի դրու-
թյան մեջ ընկավ Ինժավի շրջանի «Լենինի
պատգամը» կոլտնտեսության թերթի խմբա-
գիրը: Հոկտեմբերի 31-ին նա խորհուրդների
վերընտրությանը նվիրված հատուկ համար
լույս ընծայեց, վորի մեջ գրում էր.

«Վերընտրությունները «Լենինի պատ-
գամը» կոլտնտեսությունում նշանակված են
նոյեմբերի 1-ին: Այնուհետև պատի թերթն
ասում է.

«Այդ բանի համար վոչ մի պատրաստու-
թյուն չի տեսնված»: Այս պատի թերթը
լույս է տեսել հոկտեմբերի 31-ին, այսինքն՝
ընտրություններից մեկ որ առաջ: Յեվ ահա,
ընտրություններից միայն մի որ առաջ պատի
թերթը արթնացել ու հայտարարում է թե՛

«դեռ վոչ մի պատրաստություն չի տեսն-
ված»: Ընտրություններից միայն 1 որ առաջ
պատի թերթը մտածել է տեղավորել այն
ընկերների ցուցակը, վորոնց մասին նա խոր-
հուրդ է տալիս իր ընթերցողներին ձայն
տալ խորհուրդ ընտրելիս:

Ինչն է պատճառը, վոր այդ պատի թեր-
թը ընտրություններից միայն մեկ որ առաջ
է կարողացել իր ընթերցողներին խորհուրդ
տալ, թե ում ընտրել գյուղխորհրդի կադ
մում: Պատճառն այն է, վոր խմբագիրն աչ-
խատել է առանց պլանի, առանց վաղվա մա-
սին մտածելու: Յեթե խմբագիրն աչխատան-
քի պլան ունենար, ապա թերթն ընթերցո-
ղներին ու տեղական կազմակերպություններին
վոչ թե մեկ որ առաջ կահազանգեր վերընտ-
րություններին անպատրաստ լինելու մասին,
այլ ընտրության որից 2-3 շաբաթ առաջ:
Յեթե խմբագիրը պլան ունենար, հավանորեն
հոգ կտաներ, վոր կամպանիայի մասին հա-
տուկ գրույց ունենա գյուղխորհրդում: Հա-
վանորեն նա կխոսեր կուսկազմակերպչի հետ,
կհավաքեր գյուղթղթակիցներին, կկապվեր
ընտրական հանձնաժողովի հետ, գյուղխոր-
հրդի անդամների հետ ընտրություններից
առաջ բաց կթողներ վոչ թե մեկ, այլ հինգ
վեց համար և կկարողանար այդ համարնե-
րում ցույց տալ թե՛

1
ինչպես է աշխատել նախորդ գյուղխորհուրդը, նրա աշխատանքներում ինչ նվաճումներ ու թերություններ են յեղել:

2
ինչպես են աշխատել գյուղխորհրդի տնտեսական նպատակները, ով է լավ աշխատել, ով՝ վատ, ով չի արդարացրել ընտրողների վստահությունը, ինչպես է կատարված նակագր:

3
Խորհուրդների Համամիութենական VI համագումարից մինչև VII համագումարն ինչ փոփոխություններ են յեղել գյուղում, կուտնտեսության նվաճումները, մարդկանց աճումը, կուտնտեսական ունևոր կյանքի աճումը, կուլտեսության ջախջախումը, կուտնտեսականների կուլտուր-կենցաղային պայմանների բարելավումը:

4
կուտնտեսականներն ում են առաջադրում ընդ գյուղխորհրդում: Առանձին թեկնածուներ, այդ մարդկանց ծառայությունները, ինչ են ասում նրանց մասին կուտնտեսականները:

5
կուտնտեսականներն ինչ առաջարկություն են մտցնում ընդ գյուղխորհրդին տարիք նակագի մեջ:

Ահա հենց այս է պլանը, վորով նախորդը կարելի յեր այս ամենի մասին մտածել: Այդ նույն պլանում մանրամասն կարելի յեր նշել, թե վոր համարում, ինչ կարգով և ինչ պետք է արվի ըստ այդ պլանի: Յեվ, վոր պետի այդ ամենը հետաքրքիր ձևով արվի, հարկավոր է պլանում նախատեսել, թե գյուղ թղթակիցներից ով ինչ է պատրաստելու պատի թերթի այս կամ այն համարի համար, ինչպիսի գրույցներ պիտի կազմակերպվեն, ով ինչպիսի նյութեր է հավաքելու, խմբելու անդամներից ով պլանի վոր կետի համար է պատասխանատու: Այդ զեպքում պատի թերթի խմբագրի համար ավելի հեշտ կլիներ աշխատելը: Պլանով նախատեսած աշխատանքը բաժանելով ընկերների միջև, նա ժամանակ կունենար ղեկավարելու նրանցից յուրաքանչյուրին առանձին: Նա ժամանակ կունենար հետևելու, վոր պլանի և վոր մի կետը չտապալվի:

Ամեն մի քաղաքական կամ տնտեսական կամ պանիայի ժամանակ խմբագիրն այսպես պիտի վարվի:

1
Լավ հասկանալ այս կամ այն տնտեսական-ֆաղափական կամ պանիաների նպատակն ու նշանակությունը:

2
Համաձայնության գալ կուսկազմակերպչի, կուտնտեսության վարչության, գյուղ-

խորհրդի, բռիգադիրի հետ այն մասին, թե պատի թերթն ինչ խնդիրներ ունի այդ կամ պանիաների ընթացում:

63 Կամպանիան պատի թերթում լուսարանելու համար պլան կազմել:

4 Նախատեսած պլանը ֆնուրքյան առնել գյուղապետների հետ, կոլտնտեսության ակտիվի, տեղական, կազմակերպությունների հետ:

5 Պլանի յուրաքանչյուր կետի կատարումը հանձնարարել խմբակի այս կամ այն անդամին և գյուղապետակցին:

Նշել, թե պատի թերթը ինչ կազմակերպչական-մասսայական աշխատանք պիտի կատարի (ոեյդ, մրցություն, կանչ, գրույցներ, թերթերի ընթերցում):

7 Նշել պատի թերթերը լույս ընծայելու ժամկետները:

8 Դիմել բոլոր կոլտնտեսականներին, վոր գրեն պատի թերթում, նամակներ ու քղապատյուններ ուղարկեն:

Նշել, թե կոլտնտեսականներից ում պետք է ներգրավել՝ յեյուրք ունենալու պատի թերթում կամպանիայի կարևորագույն հարցերի շուրջը և ինչ ձևով (գրույց, դիմում, կոչ մրցման մասին և այլն):

Վորոշել յուրաքանչյուր հերթակուն համարի բովանդակությունը կամպանիայի ընթացում. ինչից սկսել, ինչպես շարունակել կամպանիան, ինչպես ավարտել, ինչպես տալ ամփոփումները և այլն:

Չպետք է մտածել, թե քանի վոր պլանը կազմված է, այն փոփոխել չի կարելի: Իհարկե, աշխատանքի ընթացքում հարկ կլինի պլանի մեջ փոփոխություններ և ուղղումներ, լրացումներ մտցնել՝ նոր մտքեր ու նոր առաջարկություններ կլինեն: Յերբեմն հարկ կլինի պլանի մեջ խոշոր փոփոխություններ ել անել:

Առանձնապես վնասակար է, յիբր նախապես կազմած պլանը խմբագրին խանգարում է ոգտագործել կոլտնտեսականների նամակները, վորոնք խմբագրությունում ստացված են պլանից դուրս: Խմբագիրը պարտավոր է գնահատել կոլտնտեսականի յուրաքանչյուր գործնական նամակը և այն տեղավորել պատի թերթում, առանց հաշվի առնելու, թե տվյալ թղթակցությունը համապատասխանո՞ւմ է

պլանին՝ թե վոչ: Չի կարելի ձգձգել կոլտըն-տեսականների նամակների տեղափոխումը:

Պլանով աշխատել սովորելով՝ խմբագիրն ու խմբիչը կհասնեն այն բանին, վոր պատի թերթը լույս կտեսնի վորոշակի ժամկետներին: Ընթերցողը ցանականում և իմանալ, թե յերբ լույս կտեսնի պատի թերթի հերթական համարը: Իսկ յեթե պատի թերթը լույս և տեսնում անորոշ որեր, յեթե կոլտնտեսականներից վոչ ոք չի իմանում, թե յերբ լույս կտեսնի իրենց թերթը, — մի որից, թե մի ամսից հետո, — ել ո՞վ թղթակցություն կուղարկի այդպիսի թերթին: Այդ, ի հարկե, չի նշանակում, թե պատի թերթն անպայման պիտի լույս ընծայել վորոշված որերին: Հաճախ այնպիսի դեպք և լինում, վոր անհրաժեշտ և լինում թերթը լույս ընծայել վորոշված ժամանակից առաջ, հենց այսօր, վաղը: Այդպիսի դեպքերում զանդադել չի կարելի:

Պլանով աշխատել սովորելով խմբագիրն ու խմբիչը կկարողանան պատի թերթը լույս ընծայել հարմար ժամանակին, որինակ, այն ժողովից առաջ, վորը պիտի քննարկի պատի թերթի լուսաբանած կարևորագույն հարցերը, և վոչ թե ժողովից հետո: Առաձն ասուեմ և «Իզալը թանգ և ճաչի ժամանակ»: Իսկ այն պատի թերթը, վոր լույս և տեսնում այն դեպքերից հետո, վորի համար նա նախապատրաստվում եր, նման և այն գղալին, վոր «եղան և բերվում ճաչից հետո»:

Պլանով աշխատել սովորելով խմբագիրն ու

խմբիչը կամրապնդեն պատի թերթի դրությունը կոլտնտեսությունում և կարող են այնպիս անել, վոր պատի թերթը հաստատորեն մտնի կոլտնտեսության կենցաղի մեջ, չլինի պատահական ու անսովոր մի բան: Այնինչ պատահականությունը կործանում և մեր պատի թերթը և հնարավորություն չի տալիս ծավալելու ինքնաքննադատությունը:

Պլանով աշխատելով խմբագիրն ու խմբիչը պետք և ձգտեն ինքնագործ պատի թերթի կուրս վերցնել և վոչ թե մակետային: Պատի թերթի խմբագրի աշխատանքներում անտանելի դրություն և, յերբ նա շարունակ սպասում և պատրաստի մակետներ (այսինքն՝ պատի թերթի համար պատրաստի պլակատներ) ստանալ: Մակետային պատի թերթերը սովորաբար ավելի վատն են լինում, քան ինքնագործ թերթերը:

ԱՇԽԱՏԱՆԻՐԸ ԿՈՒՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ՆԱՄԱԿՆԵՐԻ ՎՐԱ

Թերթի համար ամենալավ դրությունն այն և, յերբ կոլտնտեսականներից շատ նամակներ են ստացվում խմբագրությունում: Այդ իսկական մասսայական պատի թերթի առաջին նշանն և: Յերբ ընկ. Լեմինը «Իսիրա», «Պրոլետարիյ», «Պրավդա» բուլղերիցայն թերթերի խմբագիրն եր, մեծ ջանք եր գործադրում, վոր նամակների անընդհատ հոսանք ստեղծի դեպի այդ թերթերը, վոր

ստացված նամակներն ինքը կարդա ու մշակի
սպազրության համար, նրանց ծանոթու-
թյուններ կցի, ծանոթանա նամակների ա-
ռանձին հեղինակների հետ: Դեպի իր ստա-
ցած նամակներն ամենահոգատար վերաբեր-
մունքի նույնպիսի որինակ է տալիս նաև ընկ-
Ստալինը:

Ստացվում են զանազան տեսակի նամակ-
ներ: Յե՛վ յուրաքանչյուր նամակը խմբագրից
տարբեր մոտեցում է պահանջում: Բերենք
մի քանի որինակ.

1

Ստացվել է կոլտնտեսականի նամակը,
իր անձնական գանգատի մասին (այն մա-
սին, վոր անձամբ իրեն նեղացրել են,
մերժել են վորևե բան, անարդա-
րացի պատժել են և այլն): Ի՞նչ անել այդպի-
սի նամակը: Կարելի՞ յե ասել այնպես, ինչ-
պես ասում են վորոշ խմբագիրներ, թե՛

— Այս անձնական զանգատ է: Հասարա-
կական գործ չէ: Չենք տպի:

Վո՛չ, այդպես վարվել չի կարելի:

Յեթե հեղինակն իր նամակն անկեղծորեն
է գրել, նա իր զանգատը հաստատում է փա-
տերով, յեթե խմբագրին ամեն ինչ պարզ է
նույնիսկ առանց ստուգելու, կամ նա խոսել
է նամակի հեղինակի հետ և համոզվել, վոր
նրա ասածը ճիշտ է, — ապա այդպիսի նամա-
կը պետք է պատի թերթում տեղավորել և

այնպես անել, վոր այդ առթիվ անհրաժեշտ
միջոցներ ձեռք առնվեն:

2

Անձնական գանգատ է ստացվել, սակայն
խմբագիրը համոզված չէ, թե այդ գանգա-
տը տեղին է: Այդ դեպքում նա ինքը պիտի
ստուգի գանգատի խնդիրը: Չպետք է ընդո-
րինակել «մեծ» թերթերին և այդպիսի զան-
գատներն ուղարկել քննության: «Մեծ» թեր-
թերի աշխատանքի պայմաններում այդ հաս-
կանալի յե: Բայց պատի թերթի խմբագիրը
կարիք չունի այդպիսի միջոցի դիմելու, քա-
նի վոր ամեն ինչ տեղումն է, բոլոր կազմա-
կերպությունները հենց իր մոտ են գտնվում
ուրեմն հարկ չկա թղթակցությունը նրանց ու-
ղարկել: Նամակի ճշտությունը շատ արագ կա-
րող է ստուգել խմբագիրը, կամ նրա հանձ-
նարարությամբ վորևե ակտիվ ու փորձված
գյուղթղթակից: Յեթե զանգատն անհիմն
դուրս յեկավ, պետք է նրա հեղինակին բա-
ցատրել իր անարդարացի լինելը: Իհարկե,
թերթում կասկածելի զանգատներ տպել չի
կարելի:

3

Կոլտնտեսականից մի նամակ է ստացվել,
վորով նա ֆենադատում է կոլտնտեսության
այս կամ այն աշխատանքի թե՛լությունը:
Յեթե նամակում փաստեր չկան, ապա նախ և
առաջ պետք է խոսել այդ կոլտնտեսականի

հետ և պարզել, թե ինչ փաստեր ունի նա: Այդպիսի դեպքերում շատ հաճախ պատահում է, վոր մարդիկ իրենց նամակով ճիշտ են քննադատում, սակայն տալիս են միայն գրության ընդհանուր նկարագրությունը. (կոլտնտեսությունում, ֆերմայում, գոմում): «վատ է», ասում են, կամ՝ «լավ է», բայց փաստեր չեն բերում: Իսկ յերբ այդպիսի նամակի հեղինակին հայտնում են, թե վորն է ինչիբրը, նա այդտեղ ավելացնում է իր չգրած փաստերը: Պարզ է, թե այդպիսի դեպքերում ինչ պիտի անել. կամ այդ կոլտնտեսականն իր նամակը լրացնում է փաստերով և կամ պիտի նրան ոգնել, վոր անի այդ (նամակը լրացնի), ապա նամակը կարգալ, ստանալ նրա համաձայնությունը (ստորագրությունը) և ապա տեղավորել պատի թերթում:

Բայց պատահում էլ է, վոր նամակի հեղինակը բավարար չափով ստուգած փաստեր չի ունենում: Սակայն այդ չի նշանակում, թե այդ հեղինակն իրավացի չէ: Այդպիսի դեպքում կամ խմբագրերը, կամ խմբկողի վորևե անդամը և կամ մի ակտիվ թղթակից ծանոթանում են այն հարցին, վորի մասին գրել է հեղինակը (լավ է իր հետ միասին): Հետևանքը կարող է լինել, վոր՝

կամ հեղինակը բոլորովին սխալվել է: Այդ դեպքում, իհարկե, նրա թղթակցությունը թերթում չի տեղավորվում և հեղինակին բացատրվում է, թե ինչու նրա նամակը չի տեղավորվում:

Կամ հեղինակն իրավացի չէ, սակայն վոչ չիավին: Այդ դեպքում ստուգողը մի նոր թրդթակցություն է գրում իր ստորագրությամբ (յեթե նա ամեն ինչ նորից է արել) կամ իր ու նախկին հեղինակի ստորագրություններով (յեթե նրանք միասին են վերամշակել նամակը):

Կամ հեղինակը գիտակցաբար, իր անձնական գծուծ շահերից դրդված գրաբարտել է վորևե մեկին: Այդպիսի վարմունքը բաց թողնել չի կարելի: Նայած թե խմբագիրն ում հետ գործ ունի— կարելի չէ այդ դեպքի մասին պատմել պատի թերթում, կամ գործը հանձնել ընկերական դատարանի, կամ ուղղակի գրաբարտիչ նամակի հեղինակին նախազգուշացնել, վոր նա այլևս նման բան չունի:

4

Ստացվել է մի նամակ: Այնտեղ ամեն ինչ միշտ է ասված, փաստեր էլ կան, սակայն նամակի առանձին տեղերը միշտ չեն (տոնը կուպիտ է, խիստ սուր արտահայտություններ կան): Այդպիսի դեպքերում խմբկողի փաստերը թողնելով՝ հեղինակի համաձայնությամբ ուղղում է այն տեղերը, վորոնք խմբկողի կարծիքով անպետք են: Սակայն այդ դեպքում չի կարելի ի չարը գործադրել ուղղումները, չի կարելի ազավաղել կոլտնտեսականի նամակի լավ լեզուն, նրա արդարացի սուր արտահայտությունները:

Կարելի չէր չատ բազմապիսի որինակներ բերել, վորոնց հնարավոր է հանդիպել կոլտնտ

տեսականների նամակների վրա աշխատելիս: Մենք այդ չենք անի: Այս դասախոսութիւններ մեր նպատակն է միայն ցույց տալ, թե խմբագիրը վորքան ուշադիր պիտի լինի դեպքի յուրաքանչյուր առանձին նամակը: Վոչ թե բոլոր նամակներին միեւնոյն մոտեցումն ունենալ, այլ ուշադիր հաշվի առնել բոլոր հանգամանքները: Նամակների վրա աշխատելու մասին հատուկ դասախոսութիւնն է լինելու, վորտեղ մենք ավելի մանրամասն կընենք այդ խնդիրը:

ԿՈՒՍԱԿՅԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Լուսնոտեսային, բրիգադային պատի թերթի, ինչպես և ամբողջ բոլշևիկյան մամուլի ուժը նրաճումն է, վոր նա կուսակցական մամուլ է, վոր նա նվիրված կերպով պայքարում է կոմունիստական կուսակցութեան վորոշումների իրականացման համար: Պատի թերթը տեղական կուսակցական կերպարայութեան, կուսկազմակերպչի, կոմյերիտկազմակերպութեան ամբիջական ոգնականն է: Հասկանալի յե, վոր կուսնոտեսային և բրիգադային պատի թերթերը պետք է աշխատեն կուսակցական կազմակերպութեան ամենորայ դեկավայութեամբ:

Պատի թերթի խմբագիրը լավ պիտի հիշի, վոր իր գործի հաջողութեան համար պարտադիր է կուսակցական ամենորայ, մշտական ղեկավարութիւնը: Թերթերին ու գյուղթղթա-

կիցներին զազափարական ղեկավարութիւնն է ցույց տալիս կոմունիստական կուսակցութեանը ու դրա կազմակերպութիւնները տեղերում: Վորքան պատի թերթի խմբագիրը սերտորեն կապված լինի կուսկազմակերպութեան հետ, վորքան կուսկազմակերպչը լավ ղեկավարի նրա աշխատանքը, այնքան ավելի ճիշտ կաշխատի պատի թերթը:

Մեր կուսակցութեան կենտրոնական կոմիտեն շատ անգամ է վորոշումներ հրատարակել պատի թերթերն ու բանգյուղթղթակիցները ղեկավարելու մասին: Այդ վորոշումներում առաջարկվել է կուսկազմակերպութիւններին իստեքում լուր պատի թերթի խմբակուլի ղեկուցումը, կոմունիստներին ակտիվ աշխատանքի քաշել պատի թերթում, միջոցներ ձեռք առնել պատի թերթերում լույս տեսած նյութերի սուղութեամբ, բանթղթակիցներին ու գյուղթղթակիցներին պաշտպանել հալածանքներից, զազափարական-դաստիարակչական աշխատանք կատարել բան-գյուղթղթակիցների մեջ, գյուղթղթակիցներին ներգրավել քաղաքացիներն ու խմբակները, հրահանգներ-ցուցմունքներ տալ գյուղթղթակիցներին, կուսկազմակերպչը զբաղցներ կազմակերպի նրանց հետ, գյուղթղթակիցների համար ստեղծել «մամուլի անկյուններ» կամ «գյուղթղթակցի անկյուններ» և այլն: Դրա հետ միասին կուսակցութեանը նախազգուշացրել է, վոր կուսկազմակերպութեան ղեկավարութիւնը պատի թերթերին՝ չպետք է դառնա մանրակրկիտ խնա-

ճակատութիւնն կամ յուրաքանչյուր թղթակցութեան ստուգում:

Պատի թերթի խմբագիրը պետք է հիշի այս և իր կուսակազմակերպութեանն ոգնի, վոր կուսակազմութեան մեջ կարգավորվի մշտական ղեկավարութիւնը գյուղթղթակիցների ու պատի թերթի նկատմամբ: Ինքը՝ խմբագիրը պետք է հետևի, վոր յերբ կուսակազմակերպութիւնում քննութեան են պոնովում արտադրական և կուսակցական-մասսայական այս կամ այն հարցերը, պատի թերթին ևս ցուցումներ տրվեն: Նա ժամանակ առ ժամանակ իր անձնական նախաձեռնութեամբ պետք է գեղուցում տա կուսակազմակերպութեանն անհատական և ընդհանուր պատի թերթի աշխատանքի մասին:

Կարևոր է, վոր պատի թերթում մշտական տեղ լինի կուսակցական ու կոմյերիտական աշխատանքը լուսարաններու համար. կուսակազմակերպութեան վորոշումների մասին, կոմունիստների աշխատանքի մասին, բրիգադում կատարվող կուս-մասսայական աշխատանքի մասին, կոմունիստների ու կոմյերիտականների ուսուցման մասին, կուսակցութեան պատմութիւնն ուսումնասիրելու մասին: Անհրաժեշտ է կոլտնտեսութեան ու բրիգադի պատի թերթի աշխատանքին մասնակից անել կուսակցութեան անդամներին ու թեկնածուներին, համակրողներին ու կոմյերիտականներին: Կուսակազմակերպիչը թերթի խմբագրին պետք է ոգնի իրականացնել այս խնդիրը:

Յուրաքանչյուր բուլժեիկյան թերթ պետք է իմանա, թե ինքն ինչի համար է պայքարում այսօր, այս հնգօրյակին, այս ամիս, այս ձմեռ, այս դարնանացանի կամ պանիայի ընթացքում, այս բերքահավաքի կամ պանիայի, այս հացամթերումների կամ պանիայի ընթացքում: Խմբագիրը պետք է կարողանա յուրաքանչյուր տվյալ մոմենտին քերթում դնել կոլտնտեսութեան համար ամենակարևոր հարցերը: Դրա համար նա պետք է սերտորեն կապված լինի կոլտնտեսութեան վարչութեան հետ, բրիգադի հետ: Ինքը՝ խմբագիրը պետք է տեղյակ լինի բրիգադի կյանքին: Այն ժամանակ նա կուսակազմակերպչի ցուցումներն էլ կարող է ավելի լավ հասկանալ և ինչպես հարկն է կենսագործել: Պատի թերթի խմբագիրը պետք է միշտ ներկա լինի կոլտնտեսութեան արտադրական խորհրդակցութիւններին, գյուղխորհուրդների ու կոլտնտեսութեան վարչութեան նիստերին: Այն ժամանակ նա իր ուղե տեղյակ կլինի ամբողջ հասարակական կյանքին: Այն ժամանակ նա հնարավորութիւն կունենա նախատեսելու խնդիրները և ժամանակին պատի թերթում լուսարանել այն հարցերը, վորոնցով այսօր ապրում է կոլտնտեսութեանը կամ բրիգադը:

Բրիգադային պատի թերթի խմբագիրը պետք է սերտորեն կապված լինի ընդհանուր կոլտնտեսային պատի թերթի խմբագրի ու խմբագրի հետ: Ընդհանուր կոլտնտեսային ու բրիգադային պատի թերթերի խմբագիրները

պետք է հարատև կապ պահպանեն շրջանային
թերթի խմբագրի հետ: Խմբագիրը պետք է
լինի կոնսուլտացիաներին, այն խորհրդակցու-
թյուններում, վոր հրավիրում է շրջանային
թերթի խմբագրությունը: Պետք է իր թեր-
թերն ուղարկի այնտեղ՝ տեսությունների հա-
մար: Նա պետք է ուշադիր լսի այն ցուցում-
ները, վոր տալիս է շրջանային թերթը կամ
ՄՏ կայանի թերթը՝ տեսություններում, խոր-
հրդակցություններում, կոնսուլտացիաներում:

ԽՄԲԱԳԻՐԸ ՊԵՏՔ Ե ՍՈՎՈՐԻ

Շուրաքանչյուր պատի թերթի խմբագիր
պետք է միշտ հիշի, վոր հարկավոր է շարու-
նակ աշխատել իր վրա, սովորել և ընդարձա-
կել իր գիտելիքները: Դրա համար խմբագիրը
չատ հնարավորություններ ունի:

1

Անհրաժեշտ է սիստեմատիկորեն ուսումնա-
սիրել Լեհիմի ու Ստալինի յերկերը, կուսակ-
ցության ու կառավարության վորոշումները,
կարգալ գյուղատնտեսական հարցերին նվիր-
ված թեկուզ ամենաանհրաժեշտ գրականու-
թյունը (ագրոտեխնիկան, զոոտեխնիկան, մե-
քենայացում): Պետք է կարգալ նաև գեղար-
վեստական գրականություն:

2

Անպայման սովորել քաղղպրոցում կամ
խմբակում: Խմբագիրն իր լավ սովորելով

պետք է լավագույն որինակ ցույց տա իր
գյուղթղթակիցներին:

3

Շարունակ կարգալ բան-գյուղթղթակցական
ժուռնալները՝ «Սելկոյ» (կրեստյանական
գագետա)՝ յին կից) և «Ռարոչե-կրեստյանակի
կորրեսպոնդենտ»-ը («Պրավդա»-ին կից): Կոլ-
տնտեսային ու բրիգադային յուրաքանչյուր
պատի թերթի խմբագրին շատ ոգտակար է
իմանալ, թե ինչ է կատարվում գործարանային
ու մյուս թերթերում, վորպեսզի նրանցից փոխ
առնի իրեն համապատասխան փորձը: Պետք է
ոգտվել, այսպես կոչված, հեռակա հրահանգ-
չից՝ բանգյուղթղթակցական ժուռնալներից:
Սյո ժուռնալները կարդալով՝ խմբագիրը շատ
ազուտ կփաղի այնտեղից իր համար, իր պատի
թերթի համար, իր գյուղթղթակիցների հա-
համար: Պետք է գյուղթղթակիցների հետ մի-
ասին ֆննարկել այդ ժուռնալների ամենաիե-
տաֆրբական հոդվածները, կաղմակերպել
ժուռնալների ու մամուլի տեսությունների
կոլեկտիվ ընթերցանություն:

4

«Պրավդա»-յում և մեր մյուս թերթերում
տպագրվում են մամուլի տեոթյուններ: Ան-
կախ նրանից, թե այդ տեսության մեջ խոսքը
վերաբերում է տպագիր կամ պատի թերթե-
րին, պետք է այն մշակել, նրանով սովորել,
յեզրակացություններ անել նաև իր համար:

Անհրաժեշտ է այդ տեսությունները կտրել, լավ ուսումնասիրել, քննության առնել և սովորել՝ այլևի լավ աշխատել:

5

Իր վրա աշխատել կարելի չէ նաև այս ձևով. ուշադիր հետևել «Պրավդա»-ին, «Կրեստյանսկայա Գաղետա»-ին: Այդ թերթերի եջերում խմբագիրը միշտ էլ շատ հետաքրքրական բաներ կգտնի, փորձնք գրվում են կոլտնտեսությունների առաջ: Հարկավոր է միայն այդ հաշվի առնել և հարց տալ իրեն՝ իսկ մեզ մո՞տ ինչպես է: Արդյոք մեզ մոտ չկա՞ն այնպիսի փաստեր, փորձնք մասին գրում է «Պրավդա»-ն կամ «Կրեստյանսկայա Գաղետա»-ն:

«Պրավդա»-ի և «Կրեստյանսկայա Գաղետա»-ի եջերից յերևում է, թե նրանք ինչպիսի քաղաքական, արտադրական և կուլտուրական հարցեր են բարձրացնում, ինչպես են անցկացնում այս կամ այն կամ պայմանի, մասսայական աշխատանքի ինչպիսի ձևեր են կիրառում:

6

Լինել բրիգադային ու կոլտնտեսային պատի թերթերի «Կրեստյանսկայա Գաղետա»-ի հանրապետական ու շրջանային թերթերի հետ միասին կազմակերպած խմբագիրների կուրսերի ակտիվ հեռակայող:

7

Լավ են վարվում այն պատի թերթերի խմբագիրները, վորոնք «խմբագրի որագիր» են

կազմում: Նրանք իրենց հուշատետրում կանոնավոր կերպով գրի յեն առնում այն նյութերը, վորոնք ծագում են թերթեր կարգալիս, կոլտնտեսականների հետ զրուցելիս, գրի են առնում այն, ինչ լսում են արտադրական խորհրդակցություններում, կուակազմակերպչի, բրիգադիրի հետ զրուցելիս և գյուղխորհրդում: Այդպիսի հուշատետրը խմբագրին միշտ էլ կարող է ոգտակար լինել՝ պատի թերթի պլանը կազմելիս, գյուղթղթակիցներին հրահանդներ տալիս, թղթակցություններ կազմելիս, թեմաների ընտրություն կատարելիս:

8

Իրեն լրագրային աշխատանքի փորձով, հարստացնելու ուրիշ միջոցներ էլ կան, այն է՝ շրջանային կամ մարզային թերթի խմբագիրների հետ կապ պահպանելը, գյուղթղթակցական հավաքներին, սեմինարներին, ցուցահանդեսներին մասնակցելը և այլն:

Ահա, որինակ «Ռաբոչե-Կրեստյանսկի Կորրեսպոնդենտ»-ի խմբելի ընդլայնած խորհրդակցությունում ինչ է պատմում «Աժիլյենի յե» պատի թերթի խմբագիր ընկ. Պուզատիկովը (Մոսկվայի մարզի Ստարոժիլովի շրջանի «Նոր-Ուզի» կոլտնտեսություն):

«Սմբագրության հետ կապ պահպանելու ամենահասարակ ձևը նամակագրությունն է, վորից յես հենց առաջին օրերից սկսեցի սովորել իմ գրելու ձևի թերությունները. տեսա, թե այս կամ այն թրդ-

Թակցութիւնն ինչպէս կարելի յեր գրել, և ինչպէս չպետք է գրել: Դրանով եւ յետ սովորեցի»:

Ընկ. Պուզատիկովը պատմում էր, թե ինչպէս ինքը սխտեմատիկաբար լինում է իրենց շրջանային թերթի խմբագրութեան նիստերին, «վորտեղ քննադատում են թերթի հերթական համարը, ինչպէս և քննադատութեան են յենթարկում խմբագրութեան առանձին աշխատակիցներին»:

«Այդպիսի ժողովին նստած ժամանակ, — պատմում է ընկ. Պուզատիկովը, — յետ գգում եմ, թե ինքս ինչ պետք է անեմ մեզ մոտ, ինչպէս պետք է վերցնել շրջանային թերթի փորձը և փոխադրել այն մեզ մոտ՝ պատի թերթը»:

Իր կարդացած թերթերում, պատի թերթերի մասին յեղած բոլոր մամուլի տեսութիւններին առթիւ նա հավաքում է պատի թերթի խմբագրական կոլեգիան և քննութեան առնում այդ տեսութիւնը, անկախ նրանից, թե տեսութիւնը գրված է իր թերթի, թե մի ուրիշ պատի թերթի մասին:

Իր վրա աշխատելու լավ միջոց է նաև տպագիր թերթին ուղարկած իր թղթակցութեան բնագրի համեմատութիւնը՝ թերթում լույս տեսածի հետ (այդ նպատակով վորոշ ընկերներ իրենց մոտ պահում են իրենց թրդթակցութեան պատճենը և հետո այն համեմատում են տպագիր թերթում լույս տեսածի հետ):

Ինքը խմբագիրը պետք է լինի ձեռնարեց, խորապէս մտածի իր աշխատանքի հարցերի մասին, նրա ամփոփումները տա, աշխատի Բոլշևիկյան կրակով: Այն ժամանակ միշտ եւ հանդես կգա նոր, հետաքրքիր, գործնական աշխատանքի ձև պատի թերթում: Խմբագրից որինակ վերցնելով՝ մյուս գյուղթղթակիցները ևս կսկսեն այնպէս աշխատել, վոր պատի թերթը դառնա կուսկաղմակերպութեան լավագույն ողնականը: Անշարժութիւնն ու անփութութիւնը վնասակար ու կործանարար են պատի թերթի համար: Միմիայն անփութութեամբ և անձկունութեամբ կարելի չէ բացատրել այն յերեւոյթը, յերբ խմբագիրն իր պատի թերթը լույս է ընծայում տարեկան միայն յերկու-յերեք անգամ: Դե, այդ թերթ հո չէ: Թերթը պետք է հասնի կյանքի հետեից և վոչ թե հետ մնա նրանից: Պատի թերթը կոլտնտեսութիւնում պետք է լույս տեսնի առնվազն հնգորշալում մեկ անգամ, իսկ դաշտային յետուն աշխատանքների շրջանում՝ ավելի հաճախ: Մեզ մոտ արդէն հարյուրավոր խմբագիրներ կան, վորոնք այդ յետուն շրջանում պատի թերթը լույս են ընծայում ամեն օր:

Խմբագրի աշխատանքներում խիստ կարևոր է հեղափոխական ձեռներեցութիւնը, բոլշևիկյան քափը, շարժունութիւնը, գործնականութիւնը, կայունութիւնը, քաղաքական դեպքերին արագորեն արձագանքելու կարողութիւնը:

Իսկ թե ինչ են տալիս Հեղափոխական
ձեռներեցությունն ու թափը, այդ ցույց է
տալիս Չապայեվկա դյուղի որինակը (Կիյեվի
մարզ, Չոլոտոնոչսկ շրջան)։ Փոքրիկ կիսակա-
յաճանում, վորտեղ գնացքը միայն մի րոպե յե
կանգ առնում, ամեն որգնացքը Չապայեվկայի
համար զանազան թերթերի ու ժուռնալների,
հազարավոր որինակների մի ամբողջ հակ է
թողնում, վորոնք դուրս են գրել Չապայեվկա-
յի կոլանտեսականները։ Նրանք ունեն նաև
իրենց սեփական մամուլը։ Չապայեվկայում
լույս է տեսնում ընդհանուր կոլանտեսային
«Կոլեկտիվիստ» պատի թերթը։ Կուլտուրայի
տան կից «Ֆրիկուլտուրնիկ Չապայեվեց» պա-
տի թերթը, ամենորյա պատի թերթեր՝ տասն
արտադրական բրիգադներում, թերթեր՝ կաթ-
նապրանքային Փերմաներում, մեղվանոցում,
դպրոցում, գպրոցի դասարաններում։ Չապա-
յեվկայում 97 դյուղթղթակից կա, վորից 20-ը՝
կին։ Պատի թերթին կից կա լուսանկարչական
խմբակ, ունեն իրենց ծաղրանկարիչները։

Կոլանտեսային պատի թերթի նախաձեռ-
նությամբ չափազանց հետաքրքիր մի հարց է
բարձրացված — «ինչպես ճարտարագիտորեն,
գեղարվեստորեն ձևավորել դյուղը»։ Պատի
թերթում տպվում էլին կոլանտեսականների
թղթակցություններն այն մասին, թե ինչպե՞ս
պետք է ձևավորել փողոցները, բակերը, ի՞նչ-
պես է նպատակահարմար դասավորել գոմերը,
մարազները, Փերմաները, թռչնաբանները,
չրհորները։ Այդ հարցերի կապակցությամբ

թերթը հրավիրել է խորհրդակցություններ,
հավաքել է կոլանտեսականների առաջարկու-
թյունները, առաջարկել է Կիյեվից ճարտարա-
պետներ հրավիրել դյուղ, յեկել են ճարտարա-
պետներն ու նկարիչները։

Այսպես է դրվել դյուղի վերակառուցման
սկիզբը։ Ստեղծվել է կենտրոնական ուղիղ ու
գեղեցիկ մի փողոց, վորի յերկու կողմերին
տնկված են ալիպիայի, թղիի, կաղամախի
ծառեր։ Կենտրոնում՝ հրապարակում բարձրա-
նում է կոլանտեսային թատրոնը՝ 1500 մար-
դու համար։ Արդեն պատրաստ են դյուղխոր-
հրդի, կոլվարչության, փոան, վարսավիրա-
նոցի, ճաշարանի, թեյարանի, ունիվերսալ
խանութի, խրճիթ-ծննդարանի, խրճիթ-լաբա-
րատորիայի շենքերը, առաջին 30 նոր լուսա-
վոր տները՝ կոլանտեսության հարվածային-
ների համար։

Թերթի նախաձեռնությամբ հարց դրվեց՝
Չոլոտոնոչկա գետի վրա ունենալ իր, «սեփա
կան նավատորմիդը»։ Կոլանտեսությունը գնեց
մի հին մոտոռու և այլ մեխանիզմներ, վերանո-
րոգեց իր ուժերով, կառուցեց մի նավ և յեր-
կու բարժ։ Կոլանտեսային «նավատորմիդը»
արդեն փոխադրել է 440 տոնն զանազան տեսա-
կի բեռներ, 9 հազար ուղևոր։ Այս ամենի մեջ
նշանակալից գեր է խաղացել «Կոլեկտիվիստ»
պատի թերթը, նրա խմբագիր ընկ. Տերտիշկի-
նը և նրա թղթակիցները։ Այդպիսի ձեռներեց
մարդկանց, ի հարկե, ոժանդակում էլին բոլո-

ըր—կուսկազմակերպութիւնը, կոլտնտեսութիւն վարչութիւնը, գյուղխորհուրդը:

Ահա թե ինչ է նշանակում ձեռներեցութիւն:

Բայց ինչի յէ պետք, որինակի համար, այնպիսի խմբադիրը, վորն սկսում է մտածել՝ արժե՞ արդէրը բաց թողնել պատի թերթի հերթական համարն այն ժամանակ, յերբ կոլտնտեսութիւնում կուլակն է տիրում: Այդպիսի խմբադիրն մարդային կենտրոնից յեկած վոչ մի հրահանգիչ էլ չի կարող ողնել: Այդպիսի խմբադիրը քաղաքական հոտատութիւն չունի, բոլշևիկորեն աշխատելու ցանկութիւն չունի:

Այն ամենը, ինչ վոր մենք ասացինք այս դասախոսութիւնում, ցույց է տալիս, վոր խմբադիրը պետք է լինի յավ կազմակերպիչ, յավ մասսայական աշխատող: Միայն այդ դեպքում նա կարող է իսկապես յավ կազմակերպել աշխատանքը կոլտնտեսային կամ բրիգադային պատի թերթում:

Կան ելի ուրիշ շատ հարցեր, վորոնք հետաքրքրում են խմբադիրն, ինչպես որինակ՝ ի՞նչպես է սկիզբ առել բոլշևիկյան մամուլը, ինչպես աշխատել գյուղթղթակիցների մեջ, ի՞նչպես մասսայական աշխատանք տանել, Լեւինն ու Ստալինն ինչպես են սովորեցնում աշխատել բոլշևիկյան թերթում, ի՞նչպիսի արտաքին ձևավորում տալ պատի թերթին և այլն և այլն: Այդ ամենի մասին խոսք կլինի հետևյալ դասախոսութիւններում:

ԱՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ առանձնահատկութիւններ ունեն կոլտնտեսային և բրիգադային պատի թերթերը:

2. Թվեցե՛ք այն հիմնական հարցերը, վորոնցով պետք է գրազվեն կոլտնտեսային և բրիգադային պատի թերթերը:

3. Պատի թերթը կոլտնտեսութիւնում և բրիգադում ի՞նչպես պետք է պարզաբանի կուսակցութեան վորոշումները:

5. Ի՞նչու պետք է ապահովել պատի թերթի կանոնավոր հրատարակումը:

6. Ո՞վ պետք է բնութի պատի թերթի խմբազրական կոլեգիան և ով կարող է լինել խմբկոլի անդամ:

7. Ի՞նչպես անել, վոր բոլոր գյուղաքաղկիցները և ազնիվ կոլտնտեսականները մասնակցեն պատի թերթի աշխատանքներին:

8. Ի՞նչու պետք է խմբազրական կոլեգիայի և պատի թերթի պլան ունենալ:

9. Ի՞նչը պետք է դրվի պատի թերթի պլանի հիմքում:

11. Տեղեքում ի՞նչպես կարգավորել կուսակցական դեկավարութիւնը պատի քեթիքի և գյուղաքրքակիցների նկատմամբ:

12. Ի՞նչպես պետք է խմբագիրն աշխատի իր վրա:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Կոլտնտեսային կամ բրիգադային պատի թերթի խմբագիրը, մեր հեռակա կուրսերի ունկնդիրը, վոչ միայն պետք է լավ յուրացնի յուրաքանչյուր դասախոսութիւնը, այլև պիտի արագ կերպով կիրառի դասախոսութեան ցուցումներն իր գործնական աշխատանքներում: Պատի թերթում պիտի կենսագործի բոլրջեիկյան մամուլի աշխատանքի հիմնական կանոնները:

Իրա համար յուրաքանչյուր խմբագիր-կուրսերի ունկնդիր-անպայման պետք է կատարի այն, գործնական առաջադրանքները, վոր տրվում են ամեն մի դասախոսութեան վերջում:

Այդ տեսակետից ևս լավ է վարվել նույն ընկ. Պուզատիկովը: Ահա թե ինչ է պատմում նա.—

«Վորոչ հեռակայողներ հեռակա կուրսերի դասախոսութիւններն այսպես են մշակում. կարդաց և վե՛րջ, դրադ են դրնում: Յես այդպես չեմ անում: Յես ձգտում եմ յուրացնել դասախոսութեան իմաստը և աշխատում եմ կարդացածս ամրապնդել

դրավոր ձևով, վորովհետև միայն կարգալով շատ բան չի սովորվում: Իսկ յեթե կարգում ես և դրի առնում, այն ժամանակ գլխավորը մնում է հիշողութեանդ մեջ»:

Բացի այդ ընկ. Պուզատիկովն աշխատում է դասախոսութիւնից ստացածը չափսորեն ոգտագործել. նա դասախոսութիւնն ուսումնասիրում է իր գյուղթղթակիցների հետ միասին: Ճիշտ է ասում նա, վոր՝

«Յեթե մեզ համար հեռակա ուսուցում են կազմակերպել, դրա համար միջոցներ են ծախսում և աշխատանք գործադրում, ապա ուրեմն այնպես պետք է անել, վոր այդ ամենն իզուր չկորչի, իզուր չանցնեն այդ միջոցներն ու աշխատանքը»:

Այս առաջին դասախոսութիւնը՝ «Ինչպես կազմակերպել պատի թերթի աշխատանքը»— կարդալուց և յուրացնելուց հետո ունկնդիրներին առաջարկվում է.

1

Բաց թողնել պատի թերթի մի համար՝ նվիրված այս տարվա բերքահավաքի և հացամթերումների ընթացքում խմբագրական կոլեգիայի աշխատանքի արդյունքներին:

Այդ համարում կոլտնտեսականներին պատմեցեք, թե պատի թերթն ի՞նչ աշակցութիւնն է ցույց տվել կուսակազմակերպութեանն ու կոտնտեսականներին՝ իրենց գյուղատնտեսական

աշխատանքների ընթացքում, պետութեան
հանդեպ ունեցած պարտավորութեանների կա-
տարման ընթացքում: Այդ համարում ցույց
տվեք պատի թերթի դերը սոցիալիստական
մրցման մեջ, դասակարգային թշնամու դեմ
պայքարի գործում, լողերի, ձրիակերների,
պոկոդակահանների և այլնի դեմ պայքարելու
գործում: Յայտուն օրինակներով ցույց տվեք,
թե պատի թերթն ի՞նչպես է ոգնել կուսակցու-
թյանը՝ վերադաստիարակելու հետամնաց կոլ-
տնտեսականներին, թե պատի թերթն ինչպես
է ոգնել ամրապնդելու բրիգադը, կոլտնտեսու-
թյունը, կոլտնտեսականների կուլտուրական
ունեութիւնը և այլն: Վորո՞նք են պատի
թերթի հետադա խնդիրները (ձմեռվա աշխա-
տանքը, գարնան նախապատրաստութեանը):

Ինչպե՞ս կոլտնտեսականներին պատմեցե՞ք, թե
խմբակը և գյուղթղթակիցներն ի՞նչպես են
աշխատել, ի՞նչպիսի թերութեաններ կան
խմբակի և պատի թերթի աշխատանքներում:

2

Պատի թերթ լույս ընծայելուն զուգընթաց
կոլտնտեսականների ժողովում հաշվետու զե-
կուցում տվեք խմբագրական կոլեգիայի և
պատի թերթի աշխատանքի մասին: Այդ ժո-
ղովում յերեան հանեցեք խմբակի անպետք և
անաշխատունակ անդամներին և առաջարկեցեք
նրանց փոխարինել ուրիշ ընկերներով: Թող
կոլտնտեսականներն ընտրեն լավագույն գյուղ-
թղթակից-հարվածայիններին: Յեթե ամբողջ

88



խմբագրական կոլլեգիան վատ է (աշխատել,
հարց դրեք նոր խմբակը ընտրելու մասին՝ նա-
խապես համաձայնութեան գալով կուսկազմա-
կերպութեան կամ կուսկազմակերպչի հետ:

3

Կազմեցե՞ք խմբակի և պատի թերթի աշխա-
տանքի պլան՝ առաջիկա յերկու ամսվա հա-
մար:

4

Կոնսուլտացիայի համար շրջանային թերթի
խմբագրութեան տարեք ձեր լույս ընծայած
պատի թերթը և հետադա աշխատանքի պլանը:
Կոնսուլտացիայում շրջանային թերթի խմբա-
գիրը պետք է լսի յուրաքանչյուր ունկնդրի
հաշվետվութեանն իր կատարած աշխատանքի
մասին, քննութեան առնի նրա բերած պատի
թերթը և հետադա աշխատանքի պլանը:

Այսպես սովորելով ու աշխատելով յուրա-
քանչյուր ունկնդիր վոչ միայն կյուրացնի մեր
դասախոսութեանները, այլև կսովորի աշխա-
տանքի ընթացքում գործնականորեն կիրառել
իր ստացած գիտելիքները: Ուսուցումը կլա-
վացնի և կամրապնդի պատի թերթը, այն ա-
վելի բարձր աստիճանի կհասցնի:

89

ОРГАНИЗОВАНИЕ РАБОТЫ

А. Горелик

Как организовать работу стенной газеты

Издательство КП(б)А—„Хорурдайин Айастан“

«Ազգային գրադարան»



NL0142557

UP-1-25

14636